

ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՅՏ

ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ ՓԲԸ

Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՀՀ, ք. Երևան, Տերյան 66, հեռ. 51-50-35, ֆաքս 51-50-34, էլ. փոստ hsbc.armenia@hsbc.com

Թողարկման նպատակը՝

Պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված դրամական միջոցներն ուղղվելու են կարճաժամկետ սպառողական վարկերի տրամադրմանը:

Թողարկման նպատակներից է նաև ստեղծել այլընտրանքային ներդրումային գործիք Բանկի հաճախորդների և տեղական շուկայի այլ ներդրողների համար:

արժեթղթերի դասը՝

անվանական, չփոխարկվող,
արժեկտրոնային պարտատոմս

արժեթղթերի ձևը՝

ոչ փաստաթղթային

արժեթղթերի քանակը՝

10,000 (տաս հազար) հատ

արժեթղթերի
(արժույթը)՝

անվանական

արժեքը

100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ

արժեթղթերի
արժեքը՝

ընդհանուր

անվանական

1,000,000,000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամ

Առդիր՝ 51 թերթ:

Դիմումը ներկայացնող անձ՝

Թիմոթի Ռ. Սլեյթեր,

հեռ. 515000, ք. Երևան, Տերյան 66

/կազմակերպության իրավասու անձի անունը, ազգանունը,
կապի միջոցները, գտնվելու վայրը/

ստորագրությունը,

08 դեկտեմբերի 2008 թ.

Կ.Տ.

**ԱԶԳԱԳՐԻ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ
ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ
Փակ Բաժնետիրական Ընկերություն**

ՀՀ, ք. Երևան, Տերյան 66, հեռ. 51-50-35, ֆաքս 51-50-34, էլ. փոստ hsbc.armenia@hsbc.com

արժեթղթերի դասը՝	անվանական, չփոխարկվող, արժեկտրոնային պարտատոմս
արժեթղթերի ձևը՝	ոչ փաստաթղթային
արժեթղթերի քանակը՝	10,000 (տաս հազար) հատ
արժեթղթերի անվանական արժեքը (արժույթը)՝	100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ
արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը՝	1,000,000,000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամ

«ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԸ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՉԻ ԿՐՈՒՄ ՍՈՒՅՆ ԱԶԳԱԳՐՈՒՄ ԶԵՏԵՂՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՍԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՃՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ: ԳՐԱՆՑՄԱՆ ՓԱՍՏԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ»:

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և ստույգ են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի ամբողջականությունը»:

Ստորագրող անձինք՝

Վաչէ Մանուկեան	Խորհրդի նախագահ		08 դեկտեմբերի 2008
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Դեյվիդ Չարլզ Բադդ	Խորհրդի անդամ		08 դեկտեմբերի 2008
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Դերեկ Փոլ Լանթ	Խորհրդի անդամ		08 դեկտեմբերի 2008
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արա Ալեքսանյան	Խորհրդի անդամ		08 դեկտեմբերի 2008
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Թիմոթի Ռ. Սլեյթեր	Գլխավոր գործադիր տնօրեն		08 դեկտեմբերի 2008
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Աստղիկ Դրամբյան	Գլխավոր հաշվապահ		08 դեկտեմբերի 2008
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները վավերացնում են՝

Թիմոթի Ռ. Սլեյթեր	Գլխավոր գործադիր տնօրեն		08 դեկտեմբերի 2008
(անուն, ազգանուն)	(Գործադիր տնօրեն, գործադիր մարմնի ղեկավար)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ազդագրում ներառվող տեղեկությունների ցանկը՝ 2-րդ էջում:

Կ.Տ.

ԲՈՎԱՆՂԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ.....3

ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 14

1. Ընդհանուր տեղեկություններ..... 14

2. Պարտատոմսերի գնի վերաբերյալ տեղեկություններ..... 15

3. Պարտատոմսերից ստացվող եկամուտների վերաբերյալ տեղեկություններ 15

4. Սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ. 15

5. Տեղեկություններ պարտատոմսերի տեղաբաշխմանը մասնակցող անձանց և նրանց մասնակցության չափի վերաբերյալ..... 16

6. Բաժանորդագրությունների վերաբերյալ տեղեկություններ..... 16

7. Տեղաբաշխված (տեղաբաշխվող) պարտատոմսերից ստացվող պարտատոմսերի սեփականատերերի եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը. 17

8. Պարտատոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքները..... 18

9. Պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումը և (կամ) գրանցումն իրականացնող կազմակերպությունների վերաբերյալ տեղեկություններ..... 19

10. Տեղեկություններ շուկա ստեղծողի (մարքեթ մեյքերի) վերաբերյալ..... 19

11. Թողարկման նպատակը..... 19

ԲԱԺԻՆ 3. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 20

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ..... 20

1. Բանկի պատմությունը և զարգացումը. 20

2. Ֆինանսական և այլ խմբերի վերաբերյալ տեղեկություններ..... 20

3. Բանկի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները. 21

4. Բանկի ատոլիտն իրականացնող անձինք..... 22

5. Փորձագետների մասնագիտական կարծիքը և այլ անձանցից ստացված տեղեկությունները..... 22

6. Արժեթղթերով նախատեսված պարտավորությունների երաշխավորողի վերաբերյալ տեղեկություններ. . 22

7. Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի չափը..... 22

ԳԼՈՒԽ 2. ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 23

1. Ռիսկային գործունեություններ 23

2. Բանկի գործունեության հիմնական ոլորտների նկարագիրը. 24

3. Այն անձանց անվանացանկը, որտեղ Բանկը, ներառյալ նրա դուստր ընկերությունները, բաժնային արժեթղթերի նշանակալից կամ խոշոր սեփականատեր են. 32

4. Հարկային արտոնությունները..... 32

5. Դատական և իրավական ընթացակարգը. 32

6. Փոխկապակցված գործարքների վերաբերյալ տեղեկություններ..... 34

7. Բանկի նախատեսվող գործունեությունը և հեռանկարները. 35

ԳԼՈՒԽ 3. ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ..... 38

1. Ֆինանսական հաշվետվություններ. 38

2. Ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների փոփոխությունների վերաբերյալ տեղեկություններ..... 38

3. Բանկի ֆինանսական գործունեությունը. 39

4. Շահույթի կանխատեսումը և գնահատումը. 40

ԳԼՈՒԽ 4. ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՅՈՂ ԱՆՁԻՆՔ.....41

ԳԼՈՒԽ 5. ԲԱՆԿԻ ՀԵՏ ՓՈՒՏԿԱՊԼԱՅՎԱԾ ԱՆՁԱՆՑ, ԲԱՆԿԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ48

1. Բանկի հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկություններ..... 48

2. Բանկի նշանակալից, բայց ոչ խոշոր սեփականատերերի վերաբերյալ. 50

ԳԼՈՒԽ 6. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՅ ԹՈՂԱՐԿՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ51

Կից ներկայացվող փաստաթղթերի ցանկ

1. Բանկի խորհրդի որոշումը պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման մասին (անգլերեն և հայերեն)
2. Բանկի կողմից թողարկված պարտատոմսերի ազդագրի գրանցման համար վճարած պետական տուրքի անդորրագիրը
3. Բանկի և ՀՀ կենտրոնական դեպոզիտարիայի միջև կնքված պայմանագրերի պատճենները
4. Բանկի կանոնադրությունը
5. Բանկին ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրված լիցենզիայի պատճենը
6. Բանկի գրանցման վկայականի պատճենը
7. Բանկի 2005, 2006 և 2007 թ.-ների ատոլիտով հաստատված և 2008թ.-ի 1-ին, 2-րդ և 3-րդ եռամսյակների հրապարակված ֆինանսական հաշվետվությունների պատճենները
8. Բանկի խորհրդի անդամների լիազորագրերը և դրանց համապատասխան թարգմանությունները՝ տրված Բանկի գլխավոր գործադիր տնօրենին

ԲԱԺԻՆ 1. ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԱԶԳԱԳՐԻ ՀԱՄԱՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:

ՆԵՐԳՐՈՂՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՈՒՄ ՆԵՐԳՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄԸ ԿԱՅԱՑՆԵԼԻՍ ՊԵՏՔ Է ԸՆԹԵՐՅԻ ԱՄԲՈՂՁ ԱԶԳԱԳԻՐԸ:

Ամփոփաթերթի կազմման համար պատասխանատու անձն ամփոփաթերթում պարունակվող տեղեկատվության ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ լինելու համար (այդ թվում՝ քարգմանությանը վերաբերող մասով) կրում է քաղաքացիական պատասխանատվություն, եթե այն ոչ ամբողջական կամ ապակողմնորոշիչ է ազդագրի մյուս մասերի հետ դիտարկելու դեպքում:

Ներդրողը կարող է ձեռք բերել Ազդագիրը և կից ներկայացվող փաստաթղթերը թղթային տարբերակով Բանկի գլխամասային գրասենյակում և մասնաճյուղերում, իսկ էլեկտրոնային տարբերակով՝ Բանկի ինտերնետային էջում՝ <http://www.hsbc.am>:

1) «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից (այսուհետ՝ Բանկ) թողարկվող պարտատոմսերի վերաբերյալ տեղեկություններ

Թողարկվող պարտատոմսերը անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային պարտատոմսեր են:

Թողարկման ընդհանուր ծավալը կազմում է 1,000,000,000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամ:

Մեկ պարտատոմսի անվանական արժեքը 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ է:

Թողարկվող պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը կազմում է 9 (ինը) տոկոս:

Թողարկվող պարտատոմսերը փոխարկելի չեն:

Պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ազդագրի գրանցմանը հաջորդող երեսուներորդ օրացուցային օրը:

Պարտատոմսերի տեղաբաշխման ավարտը՝ ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ազդագրի գրանցմանը հաջորդող երեսուներկուերորդ օրացուցային օրը:

Տեղաբաշխման ժամկետների վերաբերյալ հնարավոր փոփոխությունները կարող են կատարվել Բանկի Խորհրդի որոշմամբ: Պարտատոմսերի բաժանորդագրությունների քանակը 10,000 (տաս հազար) հատը լրանալու դեպքում Բանկը դադարեցնում է պարտատոմսերի բաժանորդագրությունը:

Բանկը չի նախատեսում պարտատոմսերի առաջարկի, ինչպես նաև տեղաբաշխման չեղյալ հայտարարելու հանգամանքներ:

Բաժանորդագրությունը սկսվում է ազդագիրը ՀՀ Կենտրոնական բանկում գրանցելու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը: Բաժանորդագրությունը կտևի մինչև տեղաբաշխման սկզբին նախորդող աշխատանքային օրը ներառյալ:

Պարտատոմսերի բաժանորդագրությունը և դրանց դիմաց վճարումները կատարվում են միաժամանակ և ամբողջությամբ՝ Բանկի գլխավոր գրասենյակում կամ մասնաճյուղերում, և կուտակվում են Բանկում այդ նպատակով բացված **217072925605001** հատուկ հաշվին: Ներդրողների կողմից հայտերը կարող են ներկայացվել բաժանորդագրության ժամկետի աշխատանքային օրվա ընթացքում, երկուշաբթիից ուրբաթ օրերին՝ ժամը 09:30-18:00-ն, շաբաթ օրերին՝ 10:00-14:00:

Պարտատոմսերի մարումը կկատարվի թողարկողի կողմից՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, (ք. Երևան, Տերյան 66 հասցեում և մասնաճյուղերում, որոնց անվանումները և հասցեները նշված են սույն Ազգագրի 3-րդ բաժնի, 1-ին գլխի, 3-րդ կետի «բ»-ից «է» մասերում), տեղաբաշխման ավարտի օրվանից հաշվարկված 365 - երրորդ օրը:

Պարտատոմսերի մարումը կկատարվի համաձայն «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ ՀԿԴ) կողմից տրամադրված պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի և/կամ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ -ում պարտատոմսերի սեփականատերերի անվամբ բացված դեպո հաշիվների մնացորդների հիման վրա, որը կազմվում է պարտատոմսերի մարման օրվա ժամը 18.00-ի դրությամբ: Պարտատոմսերի գրանցված սեփականատերերին պարտատոմսերի դիմաց վճարումը կիրականացվի մարմանը հաջորդող աշխատանքային օրը:

Բանկը պարտատոմսերի վաղաժամկետ մարում չի նախատեսում:

Պարտատոմսերն ապահովված չեն ընկերության գույքի գրավով և այլ անձանց երաշխավորությամբ, սակայն «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ն պատասխանատու է իրեն պատկանող բոլոր ակտիվներով:

Ֆիզիկական անձանց (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերին) պատկանող պարտատոմսերը երաշխավորված են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից “Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին” ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով:

Ներդրողները կարող են տեղեկություններ ստանալ հեռախոսով՝ 515035 համարով, էլեկտրոնային փոստով՝ hsbc.armenia@hsbc.com հասցեով, ինչպես նաև այցելելով «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ –ի ինտերնետային էջը՝ <http://www.hsbc.am>: Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման մասին որոշումն ընդունել է Բանկի Խորհուրդը 05.05.2008թ.-ին:

2) Բանկի վերաբերյալ տեղեկություններ

ա. ընդհանուր տեղեկություններ

Բանկը ստեղծվել է 1995 թվականի սեպտեմբերի 19-ին, գրանցվել է որպես «Միդլենդ Արմենիա բանկ» ՓԲԸ, որը 1999 թվականի մարտի 24-ին վերանվանվել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ -ի:

Բանկն առաջին գրանցումը ստացել է 1995 թվականի սեպտեմբերի 25-ին, գրանցման համարն է 67:

Բանկը ստացել է բանկային գործունեության լիցենզիա 1996 թ.-ի հունիսի 20-ին, բանկային գործունեության լիցենզիայի համարն է 67: Բանկը փաստացի գործունեությունը սկսել է իրականացնել 1996 թվականի մարտից մինչ օրս՝ 12 տարի: Բանկի գրանցման և գործունեության վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Տերյան 66: Բանկը գրանցված և լիցենզավորված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից:

Բանկը Էյչ-Էս-Բի-Սի Հոլդինգս ՓԻ-Էլ-ՍԻ միջազգային ֆինանսական կառույցի մաս է կազմում, որը գործում է Եվրոպայի, Հյուսիսային և Հարավային Ամերիկաների, Աֆրիկայի, Հեռավոր և Մերձավոր Արևելքի 85 երկրներում և տարածքներում տեղաբաշխված շուրջ 9,500 գրասենյակների միջոցով և 2008-ի հունիսի 30-ի դրությամբ տիրապետում է 2,547 միլիարդ ԱՄՆ դոլար ակտիվների: Այս տարի Էյչ-Էս-Բի-Սի Խումբը գլխավորում է Forbes-ի աշխարհի 2000 խոշորագույն ընկերությունների ցանկը:

Սա Բանկին հնարավորություն է տալիս օգտվել աշխարհով մեկ սփռված ֆինանսական կազմակերպությունների առաջատար փորձից, ինչպես նաև ներմուծել բանկային նոր տեխնոլոգիաներ և ծառայություններ՝ դրանք հարմարեցնելով ՀՀ շուկային:

Բանկը 2007 թ.-ի նոյեմբերի 16-ին Հայաստանի պրոֆեսիոնալ բանկային հանրության կողմից ճանաչվել է երկրի բանկային համակարգի առաջատար: Այդպիսի եզրակացության են հանգել ԱրմԻնֆո գործակալության մասնագետները 19 առևտրային բանկերի 95 թուփ-մենեջերների շրջանում անցկացված մասնագիտական խաչաձև հարցման արդյունքում:

Բանկը 2007 թ.-ի նոյեմբերի 29-ին The Banker ամսագրի կողմից արժանացել է Հայաստանում տարվա բանկ մրցանակին:

Բանկը 2008 թ.-ի մայիսին Global Finance ամսագրի կողմից ճանաչվել է լավագույն բանկը Հայաստանում «2008 թ.-ի աշխարհի զարգացող շուկաների լավագույն բանկն Ասիայում» մրցանակակարգում:

Բանկի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները.

Մասնաճյուղի անվանում	Հասցե
ա. Գլխավոր գրասենյակ	Տերյան փողոց 66, Երևան 0009, ՀՀ
բ. Հանրապետության հրապարակ	Վազգեն Սարգսյան փողոց 9, Երևան 0010, ՀՀ
գ. Կոմիտաս	Կոմիտաս պողոտա 3, Երևան 0033, ՀՀ
դ. Տիգրան Մեծ	Տիգրան Մեծ պողոտա 31ա, Երևան 0018, ՀՀ
ե. Չեյթուն	Ներսիսյան փողոց 1, Երևան 0014, ՀՀ
զ. Գարեգին Նժդեհ	Բազրատունյանց պողոտա 14, Երևան 0039, ՀՀ
է. Նոր Նորք	Գայի պողոտա 19/11, Երևան 0062, ՀՀ
ը. Կոմիտաս 1	Կոմիտաս պողոտա 47, Երևան 0033, ՀՀ
թ. Վեգա 1	Նալբանդյան փողոց 9/30, Երևան 0010, ՀՀ
ժ. Վեգա 2	Կոմիտասի 37/1, Երևան 0033, ՀՀ

Բանկը ՀՀ տարածքում և տարածքից դուրս գրանցված ներկայացուցչություններ չունի:

Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի չափը

Բանկի հայտարարված կանոնադրական կապիտալը ամբողջությամբ վճարված է և կազմում է 2,437,600 հազար ՀՀ դրամ:

Բանկի կանոնադրական կապիտալը բաղկացած է 609,400 հատ սովորական բաժնետոմսերից, յուրաքանչյուրը 4,000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

Բանկը տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսեր չունի:

բ. Բանկի գործունեության վերաբերյալ տեղեկություններ

Ռիսկային գործոններ

Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի Ազդագրի 3-րդ բաժնի 2-րդ գլխում նկարագրված Ռիսկային գործոնները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը: Ռիսկային գործոններից յուրաքանչյուրը կարող է նշանակալից կամ էական բացասական ազդեցություն ունենալ Բանկի գործառնությունների, ֆինանսական իրավիճակի կամ արդյունքների վրա, որոնցից են մասնավորապես.

- ▶ Բոլոր տեսակի իրադարձությունները, որոնք կհանգեցնեն Բանկի վարկառուների կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարմանը:
- ▶ Միջազգային ֆինանսաբանկային համակարգում առաջացած ճգնաժամային իրավիճակը:
- ▶ Հնարավոր պետական կարգավորման հետ կապված փոփոխություններ:
- ▶ ՀՀ-ում բանկային ծառայությունների շուկայի խիստ մրցակցային լինելու հանգամանքը:
- ▶ Բարձրորակ մասնագետների նկատմամբ մեծ պահանջարկի առկայության պատճառով, Բանկը չի կարող երաշխավորել, որ բոլոր առանձնահատուկ կարևոր աշխատողները ապագայում միշտ կմնան Բանկի աշխատակազմում:

Հաշվի առնելով բանկային համակարգի զարգացման ներկա վիճակը, Բանկի զգուշավոր գործելակերպը, Բանկ-Հաճախորդ գործարար հարաբերությունների ներկայիս դրսևորումները, ինչպես նաև այն, որ ՀՀ կենտրոնական բանկը հստակ կանոնակարգել է բանկային համակարգը վերը նշված ռիսկերի ի հայտ գալու հավանականությունը հասցված է նվազագույնի:

Բանկի հիմնական գործունեությունը ֆինանսական միջնորդության` միջոցների ներգրավման և տեղաբաշխման, իրականացումն է, որը զուգորդվում է բանկային այլ բազմաբնույթ ծառայությունների մատուցմամբ, որոնք նկարագրված են ստորև:

Միջոցների ներգրավում

Բանկը ֆիզիկական և իրավաբանական անձանցից ընդունում է ժամկետային և ցայահանջ ավանդներ ՀՀ դրամով և արտարժույթով, բացում և վարում է ընթացիկ և խնայողական հաշիվներ:

Բանկի ներգրավված միջոցների ուղղություններն ու ցուցանիշների շարժը (դինամիկան) և մոտակա տարիների կանխատեսումներն արտացոլված են ստորև ներկայացված աղյուսակում:

Միջոցների ներգրավում **հազ. ՀՀ դրամ**

Ներգրավման ուղղությունները	31.12.2005 դրությամբ	31.12.2006 դրությամբ	31.12.07 դրությամբ	30.09.08 դրությամբ
Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից	498,883	1,182,714	8,772,222	7,726,802
Հաճախորդներից	61,891,720	69,435,574	81,872,052	84,117,048
Ընդամենը	62,390,603	70,618,288	90,644,274	91,843,850

Ներգրավման ուղղությունները	31.12.08 կանխատեսում	31.12.09 կանխատեսում	31.12.10 կանխատեսում
Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից	2,800,000	2,000,000	5,000,000
Հաճախորդներից	98,489,417	125,034,967	127,535,666
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր (բացառությամբ բաժնետոմսերի)	1,000,000	3,000,000	7,000,000
Ընդամենը	102,289,417	130,034,967	139,535,666

Վարկեր և միջոցների այլ տեղաբաշխումներ

Բանկն իրականացնում է վարկավորման հետևյալ տեսակները՝ առևտրային և ձեռնարկատիրական վարկավորում (այդ թվում՝ երաշխիքների տրամադրում, փաստաթղթային ակրեդիտիվներ, վարկային գծեր, օվերդրաֆտ), բնակելի անշարժ գույքի ձեռքբերման, վերանորոգման և կառուցման հիփոթեքային վարկավորում, ավտոմեքենաների ձեռքբերման վարկավորում, ինչպես նաև սպառողական այլ վարկավորում:

Բանկի վարկերի և տեղաբաշխված միջոցների ցուցանիշների շարժը (դինամիկան) և մոտակա տարիների կանխատեսումներն արտացոլված են ստորև ներկայացված աղյուսակում:

Վարկեր և այլ տեղաբաշխված միջոցներ

հազ. ՀՀ դրամ

Տեղաբաշխման ուղղություններ	31.12.2005 դրությամբ	31.12.2006 դրությամբ	31.12.07 դրությամբ	30.09.08 դրությամբ
Հաճախորդներին տրված վարկեր	16,377,079	30,958,147	52,584,302	68,908,325
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	36,293,269	22,980,638	20,500,502	19,147,647
ՀՀ պետական և ՀՀ կենտրոնական բանկի արժեթղթեր	13,337,709	19,569,046	21,510,773	11,304,315
Այլ արժեթղթեր	12,922	136,325	35,073	146,186
Ընդամենը	66,020,979	73,644,156	94,630,650	99,506,473

Տեղաբաշխման ուղղություններ	31.12.08 կանխատեսում	31.12.09 կանխատեսում	31.12.10 կանխատեսում
Հաճախորդներին տրված վարկեր	76,634,652	102,817,434	104,873,783
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	24,093,864	29,434,316	30,023,002
ՀՀ պետական և ՀՀ կենտրոնական բանկի արժեթղթեր	10,188,627	9,067,950	9,249,309
Այլ արժեթղթեր	34,874	34,820	34,863
Ընդամենը	110,952,017	141,354,520	144,180,957

Բանկի կողմից մատուցվող ծառայություններ.

Իր գործունեության բնույթով բանկը ունիվերսալ է և իր հաճախորդներին առաջարկում է բանկային ծառայությունների լայն շրջանակ, որն ընդգրկում է.

- ▶ բանկային ընթացիկ և խնայողական հաշիվների բացում և սպասարկում
- ▶ ժամկետային ավանդների սպասարկում
- ▶ դրամական փոխանցումներ (երկրի ներսում և երկրից դուրս)
- ▶ հիփոթեքային և սպառողական վարկերի տրամադրում
- ▶ արտարժույթային գործառնություններ
- ▶ առևտրա-վարկային ծառայություններ
- ▶ էլեկտրոնային բանկային ծառայություններ (HSBCnet)
- ▶ ճանապարհային, բանկային չեկերի և մուրհակների առք և վաճառք
- ▶ միջազգային դեբետային և կրեդիտային քարտերի տրամադրում և սպասարկում
- ▶ անհատական պահատեղերի ծառայություն
- ▶ արժեթղթերի շուկայում պահառուական և բրոքերային ծառայություններ

գ. Բանկի ֆինանսական վիճակը և գործունեության արդյունքները

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Բանկի գործունեության հիմնական արդյունքների վերաբերյալ տեղեկությունները ազդագրի ներկայացմանը նախորդող վերջին երեք տարիների համար:

հազ. ՀՀ դրամ

	31.12.05 դրությամբ	31.12.06 դրությամբ	Աճ, %	31.12.07 դրությամբ	Աճ, %
Ակտիվներ, այդ թվում՝	71,550,211	80,267,836	12.18	104,235,895	29.86
հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխառություն	16,377,079	30,958,147	89.03	52,584,302	69.86
Պարտավորություններ, այդ թվում՝	64,609,976	72,091,962	11.58	92,643,081	28.51
հաճախորդներից ներգրավված միջոցներ	61,891,720	69,435,574	12.19	81,872,052	17.91
Սեփական կապիտալ, այդ թվում՝	6,940,235	8,175,874	17.8	11,592,814	41.79
Կանոնադրական կապիտալ (փաստացի վճարված)	2,437,600	2,437,600	0	2,437,600	0
Զուտ շահույթ (վնաս)	2,844,093	3,155,329	10.94	3,326,959	5.44
Ակտիվների տարեկան եկամտաբերություն (%)	3.97	3.93	x	3.19	x
Կապիտալի տարեկան եկամտաբերություն (%)	39.81	37.86	x	33.79	x

Բանկի նախատեսվող գործունեությունը և հեռանկարները

Բանկի գործունեությունը նպատակամղված է՝

- ▶ Առաջնակարգ սպասարկման, ծառայությունների և լուծումների շնորհիվ հաճախորդների սպասարկման լավագույն մակարդակի ապահովմանը
- ▶ Բաժնետերերի համար երկարաժամկետ, արդարացի և կայուն եկամուտների ապահովմանը
- ▶ Բանկի կողմից ընտրված ոլորտներում առաջատար դիրքերի ապահովմանը
- ▶ Խթանող, արդարացի և հաճելի աշխատանքային մթնոլորտի ստեղծմանը

2008 թ. հոկտեմբերի 30-ի դրությամբ Բանկը սպասարկում է 51,162 անհատ և 4,453 իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների և ունի 415 աշխատակից: Բանկն ունի 10 գրասենյակ (գլխավոր գրասենյակը և մասնաճյուղերը) և 43 բանկոմատ Երևանում:

Մոտակա 3 տարիների ընթացքում Բանկը նախատեսում է՝

- ▶ ապահովել հաճախորդների սպասարկման որակի բարձրացում, բանկային նոր ծառայությունների ներմուծում և առկա ծառայությունների ընդլայնում,
- ▶ առանձնակի ուշադրություն դարձնել ֆիզիկական անձանց առաջարկվող բանկային ծառայությունների ընդլայնմանը, մասնավորապես.
 - 1) ընդլայնել մասնաճյուղերի ցանցը ինչպես Երևանում, այնպես էլ ՀՀ մարզերում
 - 2) ավելացնել հիփոթեքային և սպառողական վարկերի պորտֆելը՝ հաճախորդներին առաջարկելով առավել բարենպաստ և մրցունակ պայմաններ.
 - 3) ավելացնել քարտային ծառայություններից օգտվող հաճախորդների քանակը առաջարկելով բարձրորակ և մատչելի սպասարկում
 - 4) ընդլայնել բանկին պատկանող ավտոմատ գանձման մեքենաների (ԱԳՄ) ցանցը Երևանում և մարզերում
 - 5) ընդլայնել առաջարկվող ծառայությունների ցանկը, մասնավորապես առաջարկելով Բանկ-Հաճախորդ նոր էլեկտրոնային բանկային ծառայությունը
- ▶ շարունակել զարգացնել կորպորատիվ հաճախորդներին մատուցվող առևտրավարկային ծառայությունները՝ նպատակ ունենալով պահպանել բանկի առաջատար դիրքերը այս սեգմենտում
- ▶ շարունակել ակտիվների դիվերսիֆիկացիան՝ ավանդների ապահովության պահպանման, ընդհանուր ակտիվների ավելացման, ինչպես նաև կոնցենտրացիայի ռիսկը զսպելու նպատակով:

2008 թվականին Բանկի կողմից բացվել է ՀՀ-ում նախադեպը չունեցող Գործառնությունների Ազգային Կենտրոն, որտեղ համախմբված են Բանկի հաճախորդների սպասարկման հետ անմիջական կապ չունեցող բոլոր ֆունկցիաները (Back Office): Այդ ֆունկցիաները տեղափոխելով Կենտրոն՝ մասնաճյուղերը կազատվեն ավելորդ ծանրաբեռնվածությունից : Նշված միջոցառումները հնարավորություն կընձեռեն անհամեմատ բարձրացնել հաճախորդների սպասարկման մակարդակը, ինչպես նաև ներգրավել նոր հաճախորդներ: 2009 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքում Բանկը նախատեսում է ևս 1 նոր մասնաճյուղի բացում: 2009-2010 թթ նախատեսվում է առնվազն 6 մասնաճյուղերի բացում

ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում, այսպիսով մասնաճյուղերի թիվը 2010 թվականին հասցնելով 17-ի:

Բանկի կառավարման և գործունեության սկզբունքները մշակվել են ելնելով ԷյՅ-Էս-Բի-Սի Հոլդինգս ՓԲ-Էլ-Սի միջազգային ֆինանսական կառույցի հիմնադրույթներից և միջազգային փորձից՝ հաշվի առնելով վերջիններիս համապատասխանությունը ՀՀ օրենսդրական դաշտին և գործարար ավանդույթներին:

Առանցքային սկզբունքներն են՝

- ա. բիզնեսի զարգացման և աճի արդյունավետ կառավարում
- բ. հաճախորդների բարձրակարգ սպասարկում
- գ. գործառնությունների արդյունավետություն
- դ. բարձր կապիտալիզացիա և իրացվելիություն
- ե. պահպանողական վարկային քաղաքականություն
- զ. արդյունավետ ծախսային և ներդրումային քաղաքականություն

Բանկի գործունեության արդյունքների ցուցանիշների կանխատեսումները ներկայացված են ստորև բերված աղյուսակում:

Բանկի գործունեության արդյունքների կանխատեսումները հազ. ՀՀ դրամ

	31.12.08 դրությամբ	31.12.09 դրությամբ	31.12.10 դրությամբ
Եկամուտներ, այդ թվում՝	12,876,009	17,157,111	17,500,253
<i>տոկոսային եկամուտներ</i>	<i>9,144,460</i>	<i>12,920,239</i>	<i>13,178,644</i>
Ծախսեր, այդ թվում՝	(7,732,042)	(10,724,118)	(10,938,600)
<i>տոկոսային ծախսեր</i>	<i>(1,411,624)</i>	<i>(2,878,341)</i>	<i>(2,935,908)</i>
Զուտ մասհանում	(34,490)	(71,900)	(73,338)
Շահույթ	5,109,477	6,361,093	6,488,315
Շահութահարկ	(1,128,420)	(1,399,440)	(1,427,429)
Զուտ շահույթ	3,981,057	4,961,653	5,060,886

դ. Բանկի կառավարման մարմինները և կառավարմանը մասնակցող անձինք

Բանկի կանոնադրությամբ սահմանված են Բանկի կառավարման հետևյալ մարմինները.

- ▶ Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ժողով)
- ▶ Բանկի խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ)
- ▶ Բանկի գործադիր մարմինը՝ Բանկի գլխավոր գործադիր տնօրեն

Բանկի Ընդհանուր Ժողովը

Ժողովը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է:

Ժողովի հիմնական իրավասություններն են՝

Բանկի կանոնադրության հաստատումը, Բանկի կանոնադրական հիմնադրամի փոփոխումը, Բանկի վերակազմակերպման ու լուծարման հարցերը, Բանկի հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը, Բանկի խորհրդի քանակական կազմի հաստատումը, խորհրդի անդամների ընտրությունը, Բանկի անկախ աուդիտն իրականացնող անձի հաստատումը, Բանկի տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշռի, շահույթների և վնասների բաշխման, ինչպես նաև աուդիտորական եզրակացության հաստատումը, Բանկի տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը, Բանկի դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը, կանոնադրությամբ (Ազդագրին կցվում է) և օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Բանկի Խորհուրդը

Խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ օրենքով և Բանկի կանոնադրությամբ Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:

Խորհրդի հիմնական իրավասություններն են՝

Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը՝ ներառյալ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը, Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկում ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը, Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի և աշխատատեղերի հաստատումը, Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության սկզբունքների սահմանումը, Բանկի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հիմնումը, Բանկի գլխավոր գործադիր տնօրենի, ինչպես նաև գլխավոր գործադիր տնօրենի ներկայացմամբ՝ գլխավոր գործադիր տնօրենի տեղակալի և գլխավոր հաշվապահի նշանակումը, կանոնադրությամբ և օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Գործադիր մարմինը

Բանկի գործունեության ընթացիկ ղեկավարումը իրականացնում է գլխավոր գործադիր տնօրենը: Բանկում տնօրինություն չի ստեղծվում: Գլխավոր գործադիր տնօրենը նշանակվում է խորհրդի կողմից:

Գլխավոր գործադիր տնօրենի իրավասությանն են պատկանում բոլոր այն հարցերը, որոնք օրենքով կամ սույն կանոնադրությամբ չեն հանդիսանում բաժնետերերի ընդհանուր ժողովի, խորհրդի, ներքին աուդիտի ստորաբաժանման կամ գլխավոր հաշվապահի իրավասությունը:

Գլխավոր գործադիր տնօրենի բացակայության ժամանակ գլխավոր գործադիր տնօրենի պարտականություններն իրականացնում է գլխավոր գործադիր տնօրենի տեղակալը, իսկ վերջինիս բացակայության ժամանակ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ Բանկի մեկ այլ ղեկավար՝ համաձայն լիազորությունների փոխանցման պատշաճ արձանագրության:

Բանկի խորհրդի անդամներ

Վաչե Մանուկեան՝ Խորհրդի նախագահ

Դեյվիդ Չարլզ Բադդ՝ Խորհրդի անդամ

Դերեկ Փոլ Լանթ՝ Խորհրդի անդամ

Էնթրնի Զոլին Թրրներ ` Խորհրդի անդամ
 Սայմրն Անդրեաս Մանթեր ` Խորհրդի անդամ
 Ջոն Ալիսթեր Նիքոլս ` Խորհրդի անդամ
 Արա Ալեքսանյան ` Խորհրդի անդամ

Բանկի գործադիր մարմնի անդամներ

Թիմոթի Ռ. Սլեյթեր` Գլխավոր գործադիր տնօրեն
 Իրինա Սելյանյան` Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ – ֆինանսական շուկաներում գործառնությունների կառավարիչ
 Ռուզաննա Շահինյան` Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ (գտնվում է անվճար արձակուրդում)

ե. Բանկի հետ փոխկապակցված անձինք և Բանկի սեփականատերերը

Բանկի հետ փոխկապակցված, Բանկի կառավարման մարմինների անդամ, ֆիզիկական անձանց մասին տեղեկությունները ներկայացված են վերևում` «Բանկի խորհրդի անդամներ» և «Բանկի գործադիր մարմնի անդամներ» բաժիններում:

Բանկի հետ փոխկապակցված, Բանկի կառավարման մարմինների անդամ չհանդիսացող ֆիզիկական անձանց մասին տեղեկությունները ներկայացված են ստորև.

Գևորգ Թառումյան` ֆինանսական տնօրեն
 Աստղիկ Դրամբյան` գլխավոր հաշվապահ
 Մկրտիչ Լոռեցյան` ներքին աուդիտի ղեկավար
 Մարիամ Կարամանուկյան` ներքին աուդիտի անդամ
 Վահագն Նիկողոսյան` ներքին աուդիտի անդամ
 Լևոն Սահակյան` ներքին աուդիտի անդամ

Բանկի հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց սեփականության իրավունքով պատկանող Բանկի բաժնային արժեթղթերի վերաբերյալ տեղեկատվությունը տրված է Ազդագրի 5-րդ գլխում:

Բանկի հետ փոխկապակցված անձանց միջև ազգակցական կապեր չկան:

Բանկի հետ փոխկապակցված իրավաբանական անձինք, ում պատկանում են Բանկի բաժնետոմսերը.

Բաժնետիրոջ անվանումը	Հասցե	Մասնակցության չափը	Գործունեության տեսակը
Էյչ-Էս-Բի-Սի Յուրբի Բ.Վ.	Karspeldreef 6K, 1101 CJ Amsterdam, Netherlands	70%	Հոլդինգային Ընկերություն
Ուինգս Իսթերլիշմենթ	Landstrasse 99, FL9494Schaan, Liechtenstein	30%	Սեփական միջոցների կառավարում և ներդրումներ

զ. Բանկի թողարկված արժեթղթերի վերաբերյալ տեղեկություններ

1. Բանկի կողմից նախկինում թողարկված և տեղաբաշխված արժեթղթերը սովորական և ոչ փաստաթղթային բաժնետոմսեր են:
2. Բաժնետոմսերը կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված չեն:
3. Թողարկված և տեղաբաշխված բաժնետոմսերի ընդհանուր ծավալը կազմում է 2,437,600 հազար ՀՀ դրամ, յուրաքանչյուրը 4,000 ՀՀ դրամ անվանական արժեքով:
4. Բաժնետոմսերի համար մարման ժամկետներ նախատեսված չեն:
5. Բաժնետոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքները եւ պարտականությունները մանրամասն ներկայացված են Ազդագրին կից ներկայացվող Բանկի կանոնադրությունում:
6. Բաժնետոմսերի փոխարկման, բաժանման, համախմբման, ձեռքբերման, հետզնման դեպքեր չեն եղել:

ԲԱԺԻՆ 2. ԹՈՂԱՐԿՎՈՂ ՊԱՐՏԱՏՈՍՄԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ընդհանուր տեղեկություններ.

ա. Թողարկվող պարտատոմսերն անվանական, արժեկտրոնային, ոչ փաստաթղթային պարտատոմսեր են:

բ. Թողարկման ընդհանուր ծավալը կազմում է 1,000,000,000 (մեկ միլիարդ) ՀՀ դրամ:

գ. Մեկ պարտատոմսի անվանական արժեքը 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ է:

դ. Թողարկվող պարտատոմսերը փոխարկելի չեն:

ե. Պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբ է համարվում ՀՀ ԿԲ-ում սույն Ազդագրի գրանցման օրից երեսուներորդ օրացուցային օրը, իսկ ավարտը՝ ՀՀ ԿԲ-ում սույն Ազդագրի գրանցման երեսուներկուերորդ օրացուցային օրը:

Տեղաբաշխման ժամկետների վերաբերյալ հնարավոր փոփոխությունները կարող են կատարվել Բանկի Խորհրդի որոշմամբ: Պարտատոմսերի բաժանորդագրությունների քանակը 10,000 (տաս հազար) հատը լրանալու դեպքում Բանկը բաժանորդագրությունը դադարեցնում է:

զ. Բանկը չի նախատեսում պարտատոմսերի առաջարկի, ինչպես նաև տեղաբաշխման չեղյալ հայտարարելու հանգամանքներ:

է. Պարտատոմսերի բաժանորդագրությունը և դրանց դիմաց վճարումները կատարվում են միաժամանակ և ամբողջությամբ Բանկի գլխավոր գրասենյակում կամ մասնաճյուղերում և կուտակվում են Բանկում այդ նպատակով բացված **217072925605001** հատուկ հաշվին: Ներդրողների կողմից հայտերը կարող են ներկայացվել բաժանորդագրության ժամկետի աշխատանքային օրվա ընթացքում, երկուշաբթիից ուրբաթ օրերին՝ ժամը 09:30-18:00-ն, շաբաթ օրերին՝ 10:00-14:00:

ը. Պարտատոմսերի մարումը կկատարվի թողարկողի կողմից՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, (ք. Երևան, Տեղյան 66 հասցեում և մասնաճյուղերի կողմից, որոնց անվանումները և հասցեները բերված են սույն Ազդագրի 3-րդ բաժնի, 1-ին գլխի, 3-րդ կետի «բ»-ից «է» մասերում), տեղաբաշխման ավարտի օրվանից հաշվարկված 365-երորդ օրը:

Պարտատոմսերի մարումը կկատարվի համաձայն «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ի (այսուհետ՝ ՀԿԴ) կողմից տրամադրված պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի և/կամ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ -ում պարտատոմսերի սեփականատերերի անվամբ բացված դեպո հաշիվների մնացորդների հիման վրա, որը կազմվում է պարտատոմսերի մարման օրվա ժամը 18.00-ի դրությամբ: Պարտատոմսերի գրանցված սեփականատերերին պարտատոմսերի դիմաց վճարումը կիրականացվի մարման օրվանը հաջորդող օրը: Եթե վճարման օրը լինի ոչ աշխատանքային, ապա վճարումը կկատարվի հաջորդող աշխատանքային օրը:

Բանկը պարտատոմսերի վաղաժամկետ մարում չի նախատեսում:

թ. Պարտատոմսերն ապահովված չեն ընկերության գույքի գրավով և այլ անձանց երաշխավորությամբ, սակայն «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ -ն պատասխանատու է իրեն պատկանող բոլոր ակտիվներով:

Ֆիզիկական անձանց (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերին) պատկանող

պարտատոմսերը երաշխավորված են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից “Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին” ՀՀ օրենքով սահմանված կարգով և չափով:

ժ. Պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման մասին որոշումն ընդունել է Բանկի Խորհուրդը 05.05.2008թ.-ին:

2. Պարտատոմսերի գնի վերաբերյալ տեղեկություններ

Պարտատոմսերը տեղաբաշխվելու են անվանական արժեքով, ինչը Բանկի կողմից սահմանված է 100,000 (հարյուր հազար) ՀՀ դրամ:

3. Պարտատոմսերից ստացվող եկամուտների վերաբերյալ տեղեկություններ

Բանկի թողարկվող պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը կազմում է 9 (ինը) տոկոս: Պարտատոմսերի դիմաց հաշվարկված արժեկտրոնային եկամուտները կվճարվեն ամբողջությամբ պարտատոմսերի մարման օրվան հաջորդող աշխատանքային օրը, յուրաքանչյուր պարտատոմսի դիմաց 9,000 ՀՀ դրամ (օրենսդրությամբ սահմանված դեպքերում այն կարող է նվազեցվել համապատասխան հարկային վճարումների չափով. տես Բաժին 2-ի 7)-րդ կետը), պարտատոմսերի անվանական արժեքի հետ միասին:

Արժեկտրոնները պարտատոմսերի անվանական արժեքի հետ միասին վճարվում են համաձայն ՀԿԳ-ի կողմից տրամադրված պարտատոմսերի գրանցված սեփականատերերի ցուցակի և/կամ «ԷՅԶ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում պարտատոմսերի սեփականատերերի անվամբ բացված դեպո հաշիվների մնացորդների հիման վրա, որը կազմվում է վճարման օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 18:00-ի դրությամբ:

Արժեկտրոնները, ինչպես նաև պարտատոմսերի մարումից առաջացած գումարները փոխանցվում են «ԷՅԶ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում պարտատոմսերի սեփականատերերի անվամբ բացված հաշիվներին կամ այլ բանկերում սեփականատերերի հաշիվներին:

ՀՀ ԿԲ-ում Ազդագրի գրանցման վերաբերյալ որոշման ընդունման օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում Բանկը պարտատոմսերի մարման ինչպես նաև դրանց դիմաց արժեկտրոնների վճարման հստակ ամսաթիվը կիրապարակի իր ինտերնետային կայքում՝ <http://www.hsbc.am>:

Բանկը, պարտատոմսերի մարումից առաջացած գումարների և արժեկտրոնի վճարման ժամանակ լրացուցիչ բանկային ծառայություններ առաջանալու դեպքում, դրանք կմատուցի Բանկի կողմից սահմանված լրացուցիչ ծառայությունների մատուցման կարգերի համաձայն և Բանկում գործող սակագներով:

4. Սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ.

ա. Բանկի կանոնադրությամբ և Բանկի անվանական պարտատոմսերի թողարկման մասին Բանկի խորհրդի որոշմամբ պարտատոմսերում ներդրումներ կատարողների նկատմամբ սահմանափակումներ սահմանված չեն:

բ. Պարտատոմսերի բաժանորդագրության նվազագույն և առավելագույն մեծությունների

վերաբերյալ սահմանափակումներ չկան:

5. Տեղեկություններ պարտատոմսերի տեղաբաշխմանը մասնակցող անձանց և նրանց մասնակցության չափի վերաբերյալ.

Պարտատոմսերի տեղաբաշխումն իրականացվելու է Բանկի կողմից առանց այլ մասնագիտացված կազմակերպության (անդերռայթերի) ներգրավման:

6. Բաժանորդագրությունների վերաբերյալ տեղեկություններ.

Բաժանորդագրությանը կարող են մասնակցել ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական և ֆիզիկական անձինք:

Պարտատոմսերի բաժանորդագրությունն իրականացվում է Բանկի գլխավոր գրասենյակում՝ (ք. Երևան, Տերյան 66 հասցեում) և սույն Ազդագրի 3-րդ բաժնի, 1-ին գլխի, 3-րդ կետի «բ»-ից «է» ենթակետերում նշված մասնաճյուղերում:

Բաժանորդագրությունը սկսվում է ազդագիրը ՀՀ Կենտրոնական բանկում գրանցելու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը: Բաժանորդագրությունը կտևի մինչև տեղաբաշխման սկզբին նախորդող աշխատանքային օրը ներառյալ: Բաժանորդագրությունը կատարվում է հայտերի միջոցով:

Հայտերը ներկայացվում են Բանկին հետևյալ կերպ.

Փաստաթղթի ձևով, հայտը պետք է ներկայացվի Բանկի գլխավոր գրասենյակ՝ (ք. Երևան, Տերյան 66 հասցեում) և սույն Ազդագրի 3-րդ բաժնի, 1-ին գլխի, 3-րդ կետի «բ»-ից «է» ենթակետերում նշված մասնաճյուղեր: Ներդրողների կողմից հայտերը կարող են ներկայացվել բաժանորդագրության ժամկետի աշխատանքային օրվա ընթացքում, երկուշաբթիից ուրբաթ օրերին՝ ժամը 09:30-18:00-ն, շաբաթ օրերին՝ 10:00-14:00:

Բաժանորդագրման հայտը

Բաժանորդագրման հայտը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

- ▶ Հայտատուի անունը, ազգանունը /անվանումը/
- ▶ Հայտատուի հասցեն/իրավաբանական հասցեն
- ▶ Հայտատուի պետական գրանցման համարը, գրանցման ամսաթիվը (իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար)
- ▶ Հայտատուի ՀՎՀՀ-ն (իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար)
- ▶ Հայտատուի բանկային հաշվի վավերապայմանները
- ▶ Հայտատուի հաշվի վավերապայմանները Հայաստանի Կենտրոնական դեպոզիտարիայում (առկայության դեպքում)
- ▶ Ձեռքբերվող պարտատոմսերի տեսակը
- ▶ Պարտատոմսի անվանական արժեքը
- ▶ Պարտատոմսերի քանակը
- ▶ Պարտատոմսերի գինը
- ▶ Պարտատոմսերի դիմաց վճարման ժամկետը

Բանկը հայտատուների համար կարող է բացել համապատասխան բանկային հաշիվ՝

արժեկտրոնային եկամուտների և մարման գումարների փոխանցման համար:

Բանկը հայտատուների համար կարող է բացել համապատասխան դեպո հաշիվներ պարտատոմսերի հաշվառումը վարելու համար:

Բանկը հայտատուների համար բանկային և դեպո հաշիվները կբացի անվճար:

Բաժանորդագրության հետ կանչի պահանջ չի ընդունվում:

Բաժանորդագրված անձանց կողմից բաժանորդագրությունների քանակի նվազեցման պահանջ չի ընդունվում:

Հայտերը բավարարվում են ըստ դրանց ստացման հերթականության մինչև թողարկման ամբողջ ծավալի բավարարումը: Եթե բաժանորդագրման ընթացքում վերջին ներկայացված հայտը ենթակա է մասնակի բավարարման, ապա այն կարող է մասնակի բավարարվել միայն ներդրողի համաձայնությամբ՝ լրացուցիչ նոր բաժանորդագրության հայտ ներկայացնելու և նախորդը կողմերի համաձայնությամբ չեղյալ ճանաչելու միջոցով (տվյալ դեպքում պարտատոմսերի դիմաց ավել վճարած գումարը ենթակա է վերադարձման ներդրողին՝ նրա կողմից ներկայացված նոր բաժանորդագրության հայտ ի հիման վրա):

7. Տեղաբաշխված (տեղաբաշխվող) պարտատոմսերից ստացվող պարտատոմսերի սեփականատերերի եկամուտների հարկման կարգի ամբողջական և մանրամասն նկարագիրը.

Բանկի պարտատոմսերից ստացվող եկամուտները ենթակա են հարկման ըստ հետևյալ հարկատեսակների՝

▶ Շահութահարկ

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկ են վճարում (հարկատու են) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտները (այսուհետ՝ ռեզիդենտ) եւ ոչ ռեզիդենտները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության պետական կառավարչական հիմնարկների, Հայաստանի Հանրապետության տեղական ինքնակառավարման մարմինների, պետական ոչ առետրային կազմակերպությունների՝ բյուջետային հատկացումների եւ ամբողջությամբ բյուջե փոխանցվող եկամուտների մասով եւ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի:

Շահութահարկի մասին ՀՀ օրենքի իմաստով՝

ա) ռեզիդենտ են համարվում Հայաստանի Հանրապետությունում ստեղծված (պետական գրանցում ստացած, հաշվառված) կազմակերպությունները, բացառությամբ սույն կետի "բ" ենթակետում նշված կազմակերպությունների առանձնացված ստորաբաժանումների.

բ) ոչ ռեզիդենտ են համարվում օտարերկրյա պետություններում ստեղծված կազմակերպությունները, ինչպես նաեւ միջազգային կազմակերպությունները եւ դրանց կողմից Հայաստանի Հանրապետությունից դուրս ստեղծված կազմակերպությունները:

Հարկվող օբյեկտ է համարվում պարտատոմսերի տոկոսները՝ ներառյալ վաճարքից կամ վերավաճարքից ստացված հավելավճարները.

ՀՀ ռեզիդենտների կողմից Շահութահարկի հաշվարկումը և վճարումը կատարվում է ընդհանուր կարգով:

ՀՀ ոչ ռեզիդենտների դեպքում Շահութահարկի հաշվարկումը և վճարումը կատարվում է եկամտի վճարման աղբյուրի մոտ (տվյալ դեպքում բանկի կողմից)՝ հարկվող օբյեկտի նկատմամբ կիրառելով 10% դրույքաչափ:

▶ **Եկամտահարկ**

Հայաստանի Հանրապետությունում եկամտահարկ են վճարում (հարկատու են) Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ (այսուհետ՝ ռեզիդենտ) եւ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք.

Եկամտահարկի մասին ՀՀ օրենքի իմաստով ռեզիդենտ է համարվում այն ֆիզիկական անձը, որը հարկային տարում (հունվարի 1-ից մինչեւ դեկտեմբերի 31-ը ներառյալ) սկսվող կամ ավարտվող տասներկուամսյա ցանկացած ժամանակահատվածում գտնվել է Հայաստանի Հանրապետությունում ընդհանուր առմամբ 183 օր եւ ավելի, կամ ում կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում, ինչպես նաեւ Հայաստանի Հանրապետությունում պետական ծառայության մեջ գտնվող ժամանակավորապես Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս աշխատող ֆիզիկական անձը:

Եկամտահարկի մասին ՀՀ օրենքի իմաստով կենսական շահերի կենտրոն է համարվում այն վայրը, որտեղ կենտրոնացված են անձի ընտանեկան կամ տնտեսական շահերը: Մասնավորապես համարվում է, որ ֆիզիկական անձի կենսական շահերի կենտրոնը գտնվում է Հայաստանի Հանրապետությունում, եթե այնտեղ է գտնվում տունը կամ բնակարանը, որտեղ բնակվում է նրա ընտանիքը եւ գտնվում է նրա (ընտանիքի) անձնական կամ ընտանեկան հիմնական գույքը, կամ հիմնական տնտեսական (պրոֆեսիոնալ) գործունեության իրականացման վայրը:

Հարկվող օբյեկտ է համարվում պարտատոմսերի տոկոսները՝ ներառյալ վաճարքից կամ վերավաճարքից ստացված հավելավճարները.

Տոկոսների համար եկամտահարկի հաշվարկումը և վճարումը կատարվում է եկամտի վճարման աղբյուրի մոտ (տվյալ դեպքում բանկի կողմից)՝ հարկվող օբյեկտի նկատմամբ կիրառելով 10% դրույքաչափ:

8. Պարտատոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքները.

Բանկի պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ստանալ վճարվող արժեկտրոնները համաձայն սույն Ազդագրի 2-րդ բաժնի, 2-րդ կետի: Համաձայն սույն Ազդագրի 2-րդ բաժնի, 1-ին կետի ը) ենթակետի, Բանկի պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ստանալ պարտատոմսի անվանական արժեքը:

Պարտատոմսերը սահմանված ժամկետում չմարելու դեպքում Բանկը կարող է լուծարվել «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Բանկի պարտատերերին վճարումները կատարվում են «Բանկերի, վարկային կազմակերպությունների, ներդրումային ընկերությունների և ապահովագրական ընկերությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով սահմանված հերթականությամբ, որի համաձայն Բանկի կողմից առաջարկվող պարտատոմսերի սեփականատերերի պահանջները բավարարվում են չորրորդ հերթին: Ընդ որում,

յուրաքանչյուր հերթի պահանջները բավարարվում են նախորդ հերթի պահանջները լրիվ բավարարելուց հետո: Պարտատոմսերի սեփականատերերը կարող են օգտվել օրենքով և իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներից:

Պարտատոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ինքնուրույն տնօրինել, տիրապետել և օգտագործել իրենց սեփականության ներքո գտնվող պարտատոմսերը: Ընդ որում, պարտատոմսերի վաճառքը կարող է կատարվել Հայաստանի ֆոնդային բորսայում՝ կարգավորվող շուկայում Բանկի պարտատոմսերը առևտրի թույլտվության ստացումից և ցուցակումից հետո:

Պարտատոմսեր ձեռք բերող անձը պարտավոր է ՀԿԳ-ում, «ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում կամ ՀՀ ԿԲ սահմանված կարգով լիցենզավորված արժեթղթերի այլ պահառուի մոտ բացել անձնական դեպո հաշիվ՝ վերջիններիս կողմից սահմանված կանոններին համաձայն:

Երկրորդային շուկայում պարտատոմսեր ձեռք բերող կամ օտարող անձը պարտավոր է իր հաշվին կատարել ՀԿԳ-ի, «ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի, այլ պահառուական, բրոքերային ծառայություններ մատուցող կազմակերպության և Հայաստանի ֆոնդային բորսայի կողմից սահմանված պարտադիր վճարները՝ կապված սեփականության իրավունքի գրանցման կամ գործարքների ձևակերպման հետ:

9. Պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների հաշվառումը և (կամ) գրանցումն իրականացնող կազմակերպությունների վերաբերյալ տեղեկություններ.

Բանկի պարտատոմսերի նկատմամբ իրավունքների և պարտավորությունների գրանցումը և հաշվառումն իրականացնում է՝

- ▶ «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ն, ք. Երևան, Մ. Սկրտչյան 5բ, հեռ. 56-64-46:
- ▶ «ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, ք. Երևան, Տերյան 66, հեռ. 51-50-57

10. Տեղեկություններ շուկա ստեղծողի (մարքեթ մեյքերի) վերաբերյալ

Բանկը նախատեսում է թողարկվող պարտատոմսերը գրանցել և ցուցակել Հայաստանի ֆոնդային բորսայում՝ նպատակ հետապնդելով ապահովել երկրորդային շուկայում պարտատոմսերի իրացվելիությունը: Պարտատոմսերի ֆոնդային բորսայում գրանցվելուց հետո Բանկը ՀՀ կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված ներդրումային ծառայություններ մատուցող անձանց հետ նախատեսում է կնքել մարքեթ-մեյքերի պայմանագիր, համաձայն որի մարքեթ-մեյքերը, ֆոնդային բորսայի առևտրային հարթակում միաժամանակ ձեռքբերման և վաճառքի մշտական պատվերներ պահպանելով, պետք է ապահովի դրանց առավել իրացվելիությունը:

11. Թողարկման նպատակը

Պարտատոմսերի տեղաբաշխումից ստացված դրամական միջոցներն ուղղվելու են կարճաժամկետ սպառողական վարկերի տրամադրմանը:

Թողարկման նպատակներից է նաև ստեղծել այլընտրանքային ներդրումային գործիք Բանկի հաճախորդների և տեղական շուկայի այլ ներդրողների համար:

ԲԱԺԻՆ 3. ԲԱՆԿԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Բանկի պատմությունը և զարգացումը.

Բանկի պաշտոնական լրիվ անվանումն է.
հայերեն՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» Փակ Բաժնետիրական Ընկերություն
անգլերեն՝ HSBC Bank Armenia Closed Joint Stock Company

Բանկի պաշտոնական կրճատ անվանումն է .
հայերեն՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
անգլերեն՝ HSBC Bank Armenia cjsc

Բանկի իրավաբանական հասցեն է.
Հայաստանի Հանրապետություն, 0009, ք. Երևան, Տերյան փողոց, թիվ 66 շենք
Բանկը ստեղծվել է 1995 թվականի սեպտեմբերի 19-ին, գրանցվել է որպես «Միլլենդ Արմենիա
բանկ» ՓԲԸ, որը 1999 թվականի մարտի 24-ին վերանվանվել է «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ
Հայաստան» ՓԲԸ -ի:

Բանկն առաջին գրանցումը ստացել է 1995 թվականի սեպտեմբերի 25-ին, գրանցման համարն
է 67: Բանկը ստացել է բանկային գործունեության լիցենզիա 1996թ. հունիսի 20-ին, բանկային
գործունեության լիցենզիայի համարն է 67:

Բանկը փաստացի գործունեությունը սկսել է իրականացնել 1996 թվականի մարտից մինչ օրս՝
12 տարի:

Բանկի գրանցման և գործունեության վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան,
Տերյան 66:

Բանկը գրանցված և լիցենզավորված է Հայաստանի Հանրապետության կենտրոնական
բանկի կողմից:

Վերջին ժամանակաշրջանի մրցանակներ

Բանկը 2007 թ.-ի նոյեմբերի 16-ին Հայաստանի պրոֆեսիոնալ բանկային հանրության կողմից
ճանաչվել է երկրի բանկային համակարգի առաջատար:

Բանկը 2007 թ.-ի նոյեմբերի 29-ին The Banker ամսագրի կողմից արժանացել է Հայաստանում
տարվա բանկ մրցանակին:

Բանկը 2008 թ.-ի մայիսին Global Finance ամսագրի կողմից ճանաչվել է լավագույն բանկը
Հայաստանում «2008 թ.-ի աշխարհի զարգացող շուկաների լավագույն բանկն Ասիայում»
մրցանակակարգում:

2. Ֆինանսական և այլ խմբերի վերաբերյալ տեղեկություններ.

Բանկը Էյչ-Էս-Բի-Սի Հոլդինգս Փի-Էլ-Սի միջազգային ֆինանսական կառույցի մաս է
կազմում, որը գործում է Եվրոպայի, Հյուսիսային և Հարավային Ամերիկաների, Աֆրիկայի,
Հեռավոր և Մերձավոր Արևելքի 85 երկրներում և տարածքներում տեղաբաշխված շուրջ 9,500
գրասենյակների միջոցով և 2008-ի հունիսի 30-ի դրությամբ տիրապետում է 2,547 միլիարդ
ԱՄՆ դոլար ակտիվների:

2008 թ.-ի առաջին կիսամյակի շահույթը մինչև հարկումը կազմել է 10 միլիարդ 247 միլիոն ԱՄՆ դոլար: ԷյՋ-Էս-Բի-Սի Խմբի 335,000 աշխատակիցները սպասարկում են աշխարհով մեկ սփռված ավելի քան 100 միլիոն հաճախորդների:

ԷյՋ-Էս-Բի-Սի Խմբի անդամ լինելը «ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին հնարավորություն է տալիս օգտվել աշխարհով մեկ սփռված ֆինանսական կազմակերպությունների առաջատար փորձից, ինչպես նաև ներմուծել բանկային նոր տեխնոլոգիաներ և ծառայություններ՝ այն հարմարեցնելով ՀՀ շուկային:

ԷյՋ-Էս-Բի-Սի Խմբի Վերջին ժամանակաշրջանի մրցանակներ

ԷյՋ-Էս-Բի-Սի Խումբը 2008թ.-ի հուլիսի 11-ին առաջինն է ճանաչվել աշխարհի առաջատար բանկերի ցանկում ըստ The Banker ամսագրի: ԷյՋ-Էս-Բի-Սի-ն երրորդ տեղից տեղափոխվել է առաջին տեղ՝ գլխավորելով աշխարհի լավագույն 1000 բանկերի ցանկը The Banker ամսագրի տարեկան հետազոտության արդյունքներով: 1999թ.-ից ի վեր ԷյՋ-Էս-Բի-Սի-ն առաջին ոչ-ամերիկյան կազմակերպությունն է, որ գլխավորում է այդ ցանկը՝ իր ընդհանուր կապիտալի և մինչև հարկումը շահույթի ցուցանիշներով, որոնք անցյալ տարվա տվյալներով ռեկորդային էին:

ԷյՋ-Էս-Բի-Սի Խումբը 2008թ.-ի ապրիլի 4-ին գլխավորել է Forbes-ի աշխարհի 2000 խոշորագույն ընկերությունների ցանկը: Տարեկան հետազոտությունը ներառել է 26 ոլորտներում և 60 երկրներում գործող կազմակերպությունների շրջանառության, շահույթների, ակտիվների և շուկայական արժեքի ուսումնասիրություն:

ԷյՋ-Էս-Բի-Սի ապրանքանիշը 2008 թ.-ի փետրվարի 18-ին առաջինն է ճանաչվել աշխարհի առավել արժեքավոր բանկային ապրանքանիշերի ցանկում ըստ The Banker ամսագրի: Խումբը նաև արժանացել է առավելագույն երեք “A” վարկանիշի:

3. Բանկի մասնաճյուղերը և ներկայացուցչությունները.

Բանկի մասնաճյուղերը

Մասնաճյուղի անվանում	Հասցե
ա. Գլխավոր գրասենյակ	Տերյան փողոց 66, Երևան 0009, ՀՀ
բ. Հանրապետության հրապարակ	Վազգեն Սարգսյան փողոց 9, Երևան 0010, ՀՀ
գ. Կոմիտաս	Կոմիտաս պողոտա 3, Երևան 0033, ՀՀ
դ. Տիգրան Մեծ	Տիգրան Մեծ պողոտա 31ա, Երևան 0018, ՀՀ
ե. Ջեյթուն	Ներսիսյան փողոց 1, Երևան 0014, ՀՀ
զ. Գարեգին Նժդեհ	Բագրատունյանց պողոտա 14, Երևան 0039, ՀՀ
է. Նոր Նորք	Գայի պողոտա 19/11, Երևան 0062, ՀՀ
ը. Կոմիտաս 1	Կոմիտաս պողոտա 47, Երևան 0033, ՀՀ
թ. Վեգա 1	Նալբանդյան փողոց 9/30, Երևան 0010, ՀՀ
ժ. Վեգա 2	Կոմիտասի 37/1, Երևան 0033, ՀՀ

Բանկը ՀՀ տարածքում և տարածքից դուրս գրանցված ներկայացուցչություններ չունի:

4. Բանկի աուդիտն իրականացնող անձինք.

2005, 2006 և 2007 թվականներին «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ի կողմից իրականացվել է Բանկի հաշվապահական հաշվետվությունների անկախ աուդիտորական ստուգում:

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ի հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան 0010, Վազգեն Սարգսյան 26/1, Էրեբունի Պլազա Բիզնես կենտրոն, 8-րդ հարկ:

Հեռ. +374 (10) 566 762, ֆաքս +374 (10) 566 762, www.kpmg.am:

Տնօրեն՝ Էնդրյու Քոքսշել:

Վերջին երեք տարիների ընթացքում Բանկի աուդիտն իրականացնող անձի կողմից աշխատանքից հրաժարման, վերընտրությանը չմասնակցելու և աշխատանքից այլ հիմքերով ազատման փաստ չի եղել:

5. Փորձագետների մասնագիտական կարծիքը և այլ անձանցից ստացված տեղեկությունները.

Փորձագետ կամ խորհրդատու, որի մասնագիտական կարծիքն օգտագործվել է Ազդագրում, Բանկը չի ներգրավել:

ՀՀ տնտեսության ու բանկային համակարգի մասին ամփոփ տեղեկությունները Ազդագրում ներառված են ՀՀ ԿԲ-ի, այլ մարմինների և ՀՀ-ում գործող բանկերի կողմից մամուլում կատարված պաշտոնական հրապարակումներից: Այլ անձանցից ձեռք բերված տեղեկություններ Ազդագրում ներառված չեն:

6. Արժեթղթերով նախատեսված պարտավորությունների երաշխավորողի վերաբերյալ տեղեկություններ.

Ֆիզիկական անձանց (այդ թվում՝ անհատ ձեռնարկատերերին) պատկանող պարտատոմսերը երաշխավորված են Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից “Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին” ՀՀ օրենքով սահմանված կարգով և ծավալով:

7. Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի չափը.

Բանկի հայտարարված կանոնադրական կապիտալը վերջին երեք տարիների ընթացքում փոփոխությունների չի ենթարկվել, ամբողջությամբ վճարված է և կազմում է 2,437,600 հազար ՀՀ դրամ:

Բանկի կանոնադրական կապիտալը բաղկացած է 609,400 հատ սովորական բաժնետոմսերից, յուրաքանչյուրը 4,000 ՀՀ դրամ անվանական արժեքով:

2008-2010թ.թ Բանկի կանոնադրական կապիտալի աճ ըստ տարիների չի նախատեսվում:

Բանկը տեղաբաշխված արտոնյալ բաժնետոմսեր չունի:

ԳԼՈՒԽ 2. ԲԱՆԿԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ռիսկային գործոններ

Ցանկացած տնտեսավարող սուբյեկտի, այդ թվում՝ բանկերի, պարտատոմսերում ներդրումները կապված են որոշակի ռիսկերի հետ:

Ներդրողը պետք է ուշադիր դիտարկի ներքո շարադրված ռիսկերի նկարագրությունը և Ազդագրի մեջ տեղ գտած բոլոր տեղեկությունները մինչև առաջարկվող պարտատոմսերի գնելու որոշումն ընդունելը:

Ռիսկային գործոններից յուրաքանչյուրը կարող է նշանակալից կամ էական բացասական ազդեցություն ունենալ Բանկի գործառնությունների, ֆինանսական իրավիճակի կամ արդյունքների վրա:

Ելնելով նշվածից, Բանկը խուսափել է Ազդագրում ներկայացված ցուցանիշների, կանխատեսումների և տեղեկատվության մեկնաբանություններից, որպեսզի ներդրողն ինքնուրույն ուսումնասիրի դրանք՝ պարտատոմսեր գնելու կամ չգնելու որոշում կայացնելու համար:

- ▶ Բոլոր տեսակի իրադարձությունները, որոնք կհանգեցնեն Բանկի վարկառուների կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարմանը, հաճախորդների կողմից Բանկի հուսալիության հանդեպ կասկածանքի կամ բացասական վերաբերմունքի, կարող են էապես ազդել Բանկի գործունեության վրա: Դա կարտահայտվի Բանկի կողմից լրացուցիչ ծախսերի կատարմամբ և շահույթի պլանային ցուցանիշի մակարդակի ապահովման դժվարությամբ:
- ▶ Բանկը անհրաժեշտ իրացվելիությունը, վճարահաշվարկային և օրենսդրական պահանջները ապահովելու նպատակով ՀՀ կենտրոնական բանկում, միջազգային բարձր վարկանիշ ունեցող բանկերում, ներառյալ Էյչ-Էս-Բի-Սի Խմբի մի շարք բանկերում ունեցած թղթակցային հաշիվներին պահում է ցպահանջ միջոցներ (համապատասխանաբար 50%, 40% և 10% հարաբերակցությամբ), որոնք կազմում են Բանկի ընդհանուր ակտիվների մոտ 17%-ը: Հաշվի առնելով միջազգային ֆինանսաբանկային համակարգում առաջացած ճգնաժամային իրավիճակը՝ չենք կարող բացառել նաև ճգնաժամի բացասական ազդեցությունը վերոնշյալ ֆինանսական կառույցների վրա:
- ▶ Բանկային գործունեությունը իրավասու մարմինների կողմից լիցենզավորման և կարգավորման ենթակա գործունեություն է: Բանկային գործունեության ոլորտում պետական կարգավորման նպատակը հանդիսանում է ներդրողների և հաճախորդների իրավունքների պաշտպանությունը, որն իրականացվում է տնտեսական գործունեության նորմատիվների և բանկային ռիսկերի կառավարման համակարգերի սահմանմամբ: Դա նշանակում է, որ հնարավոր են պետական կարգավորման հետ կապված փոփոխություններ, որոնք կարող են էապես ազդել Բանկի գործառնությունների վրա և անգամ բացասաբար ազդել ֆինանսական ցուցանիշների վրա:
- ▶ ՀՀ-ում բանկային ծառայությունների շուկան խիստ մրցակցային է, շուկայում գործում են այլ բանկեր, որոնցից մի քանիսն ունեն բավականին լավ նյութական և ֆինանսական կարողություններ: Այդ պատճառով Բանկը չի կարող երաշխավորել պլանավորված շահույթի ստացումը, ապագայում հեռանկարային զարգացման ծրագրով մշակված ռազմավարական նպատակների և խնդիրների լուծման մարտավարության ամբողջական իրականացումը, քանի որ մրցակցությունը ստանում է նոր ազդակներ:

- ▶ Բարձրորակ մասնագետների առկայությունը Բանկի աշխատակազմում շատ կարևոր է մրցունակ լինելու և պլանավորված աշխատանքների արդյունավետ իրականացման համար: Նման մասնագետների նկատմամբ մեծ պահանջարկի առկայության պատճառով, Բանկը չի կարող երաշխավորել, որ բոլոր առանձնահատուկ կարևոր աշխատողները ապագայում միշտ կմնան Բանկի աշխատակազմում:

Ելնելով ՀՀ-ում տնտեսական և քաղաքական զարգացումներից, հաշվի առնելով բանկային համակարգի զարգացման ներկա վիճակը, Բանկի զգուշավոր գործելակերպը, Բանկ-Հաճախորդ գործարար հարաբերությունների ներկայիս դրսևորումները, ինչպես նաև այն, որ ՀՀ կենտրոնական բանկը հստակ կանոնակարգել է բանկային համակարգը և խիստ հսկողություն է իրականացնում բանկերի նկատմամբ, ներառյալ ռիսկերի վաղ հայտնաբերման գործում, վերը նշված ռիսկերի ի հայտ գալու հավանականությունը հասցված է նվազագույնի:

2. Բանկի գործունեության հիմնական ոլորտների նկարագիրը.

ա. Բանկի համար առավել կարևոր գործունեությունը ֆինանսական միջնորդության՝ միջոցների ներգրավում և տեղաբաշխում, իրականացումն է, որը զուգորդվում է բանկային այլ բազմաբնույթ ծառայությունների մատուցմամբ, որոնք նկարագրված են ստորև:

Միջոցների ներգրավում

Բանկը ֆիզիկական և իրավաբանական անձանցից ընդունում է ժամկետային և ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով և արտարժույթով, բացում և վարում է ընթացիկ և խնայողական հաշիվներ:

Բանկի ներգրավված միջոցների ուղղությունները և ցուցանիշների շարժը (դինամիկան), դրանց մոտակա տարիների կանխատեսումներն արտացոլված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Միջոցների ներգրավում

հազ. ՀՀ դրամ

Ներգրավման ուղղությունները	31.12.2005 դրությամբ	31.12.2006 դրությամբ	31.12.07 դրությամբ	30.09.08 դրությամբ
Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից	498,883	1,182,714	8,772,222	7,726,802
Հաճախորդներից	61,891,720	69,435,574	81,872,052	84,117,048
Ընդամենը	62,390,603	70,618,288	90,644,274	91,843,850

Ներգրավման ուղղությունները	31.12.08 կանխատեսում	31.12.09 կանխատեսում	31.12.10 կանխատեսում
Բանկերից և այլ ֆինանսական կազմակերպություններից	2,800,000	2,000,000	5,000,000
Հաճախորդներից	98,489,417	125,034,967	127,535,666
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր (բացառությամբ բաժնետոմսերի)	1,000,000	3,000,000	7,000,000
Ընդամենը	102,289,417	130,034,967	139,535,666

Վարկեր և միջոցների այլ տեղաբաշխումներ

Բանկն իրականացնում է վարկավորման հետևյալ տեսակները՝ բիզնեսի վարկավորում (այդ թվում՝ երաշխիքների տրամադրում, փաստաթղթային ակրեդիտիվներ, վարկային գծեր, օվերդրաֆտ), բնակարանի ձեռքբերման և վերանորոգման հիփոթեքային վարկավորում, ավտոմեքենաների ձեռքբերման վարկավորում, ինչպես նաև սպառողական այլ վարկավորում:

Բանկի վարկերի և տեղաբաշխված միջոցների ցուցանիշների շարժը (դինամիկան) և մոտակա տարիների կանխատեսումներն արտացոլված են ստորև ներկայացված աղյուսակում:

Աղյուսակ 2. Վարկեր և այլ տեղաբաշխված միջոցներ

հազ. ՀՀ դրամ

Տեղաբաշխման ուղղություններ	31.12.2005 դրությամբ	31.12.2006 դրությամբ	31.12.07 դրությամբ	30.09.08 դրությամբ
Հաճախորդներին տրված վարկեր	16,377,079	30,958,147	52,584,302	68,908,325
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	36,293,269	22,980,638	20,500,502	19,147,647
ՀՀ պետական և ՀՀ կենտրոնական բանկի արժեթղթեր	13,337,709	19,569,046	21,510,773	11,304,315
Այլ արժեթղթեր	12,922	136,325	35,073	146,186
Ընդամենը	66,020,979	73,644,156	94,630,650	99,506,473

Տեղաբաշխման ուղղություններ	31.12.08 կանխատեսում	31.12.09 կանխատեսում	31.12.10 կանխատեսում
Հաճախորդներին տրված վարկեր	76,634,652	102,817,434	104,873,783
Պահանջներ բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ	24,093,864	29,434,316	30,023,002
ՀՀ պետական և ՀՀ կենտրոնական բանկի արժեթղթեր	10,188,627	9,067,950	9,249,309
Այլ արժեթղթեր	34,874	34,820	34,863
Ընդամենը	110,952,017	141,354,520	144,180,957

Արտարժույթի և արժեթղթերի դիլինգ և բրոքերային ծառայություններ

Բանկը կատարում է արտարժույթի, ՀՀ պետական և ՀՀ կենտրոնական բանկի պարտատոմսերի առջ ու վաճառքի գործարքներ:

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից Բանկը ճանաչվել է ՀՀ պետական ներքին պարտքի կառավարման գործակալ:

Բանկային փոխանցումներ

Բանկը 1996թ.-ից սկսած անդամակցում է S.W.I.F.T. միջազգային համակարգին:

Բանկը թղթակցային հաշիվներ ունի արտերկրում գործող 12 բանկերում և ՀՀ կենտրոնական բանկում, ինչը հնարավորություն է տալիս սպասնովել Բանկի հաճախորդների վճարահաշվարկային սպասարկումը տարբեր արժույթներով և վճարային գործիքներով:

Բանկը հանդիսանում է ՀՀ կենտրոնական բանկի BankMail դրամական փոխանցումների համակարգի անդամ:

Պլաստիկ Քարտեր

Պլաստիկ քարտերի թողարկման և սպասարկման համակարգի կատարելագործումը Բանկի համար հանդիսանում է զարգացման գերակա ուղղություններից մեկը՝ հաշվի առնելով ներկա պայմաններում բնակչության կողմից աճող պահանջարկը և անկանխիկ վճարումների ավելացմանն ուղղված պետական քաղաքականությունը:

Հանդիսանալով MasterCard համակարգի լիիրավ անդամ և «Արմենիան քարդ» (ԱրՔա) ընկերության բաժնետեր և լիիրավ անդամ՝ Բանկը իրականացնում է միջազգային դեբետային և կրեդիտային քարտերի տրամադրում և սպասարկում:

Միջազգային չեկեր

AMERICAN EXPRESS ճանապարհային չեկերի, Բանկի կողմից Բանկի անվամբ թողարկված ճանապարհային, բանկային չեկերի և մուրհակների առք և վաճառք:

Բանկի կողմից մատուցվող հիմնական ծառայությունների աճի շարժը (դինամիկան) ներկայացվում է դրանցից ստացված եկամուտների (ոչ տոկոսային) ցուցանիշներով և դրանց մոտակա տարիների կանխատեսումներով Աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Հիմնական ծառայություններից եկամուտներ

հազ. ՀՀ դրամ

Եկամուտներ	2005 թվական	2006 թվական	2007 թվական	2008 թվականի երեք եռամսյակ
Արտարժույթային գործառնություններից (զուտ)	1,161,044	1,179,237	1,230,063	1,058,146
Միջնորդավճարներ վճարահաշվարկային ծառայություններից	1,105,719	1,304,219	1,536,137	1,237,301
Երաշխիքներից, ակրեդիտիվներով գործառնություններից	64,242	108,561	139,346	118,723
Ընդամենը	2,331,005	2,592,017	2,905,546	2,414,170

Եկամուտներ	2008 թվական կանխատեսում	2009 թվական կանխատեսում	2010 թվական կանխատեսում
Արտարժույթային գործառնություններից (զուտ)	1,437,234	1,678,900	1,712,478
Միջնորդավճարներ վճարահաշվարկային ծառայություններից	1,646,605	1,964,480	2,003,770
Երաշխիքներից, ակրեդիտիվներով գործառնություններից	138,783	167,269	170,614
Ընդամենը	3,222,622	3,810,649	3,886,862

բ. Բանկի ֆինանսական միջնորդության ծառայությունների հիմնական բնութագրիչները, դրանց շարժը (դինամիկան) և կանխատեսումները ներկայացված է Աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 4. Բանկի ֆինանսական միջնորդության ծառայությունների հիմնական բնութագրիչները **հազ. ՀՀ դրամ**

	31.12.05 դրությամբ	31.12.06 դրությամբ	31.12.07 դրությամբ	30.09.08 դրությամբ
Հաճախորդներին տրված վարկեր, այդ թվում՝	16,377,079	30,958,147	52,584,302	68,908,325
<i>բիզնես վարկեր</i>	<i>10,626,439</i>	<i>15,958,376</i>	<i>27,012,175</i>	<i>36,017,738</i>
Միջին տոկոսադրույք	15.7%	13.4%	13%	12.58%
Բնակարանային հիփոթեք և սպառողական այլ վարկեր	5,750,640	14,806,444	25,335,514	32,662,627
Միջին տոկոսադրույք	12.3%	12.29%	12.27%	12.61%
Հաճախորդներից ներգրավված միջոցներ, այդ թվում՝	60,812,358	69,435,574	81,872,052	84,117,048
<i>ֆիզիկական անձանցից</i>	<i>36,247,874</i>	<i>37,627,055</i>	<i>51,864,817</i>	<i>52,922,162</i>
<i>իրավաբանական անձանցից</i>	<i>24,564,484</i>	<i>31,808,519</i>	<i>30,007,235</i>	<i>31,194,886</i>

	31.12.08 կանխատեսում	31.12.09 կանխատեսում	31.12.10 կանխատեսում
Հաճախորդներին տրված վարկեր, այդ թվում՝	76,634,652	102,817,434	104,873,783
<i>բիզնես վարկեր</i>	<i>40,366,744</i>	<i>55,920,316</i>	<i>57,038,722</i>
Բնակարանային հիփոթեք և սպառողական այլ վարկեր	36,267,909	46,897,118	47,835,060
Հաճախորդներից ներգրավված միջոցներ, այդ թվում՝	98,489,417	125,034,967	127,535,666
<i>ֆիզիկական անձանցից</i>	<i>61,964,525</i>	<i>78,665,632</i>	<i>80,238,945</i>
<i>իրավաբանական անձանցից</i>	<i>36,524,892</i>	<i>46,369,335</i>	<i>47,296,722</i>

Բանկը կատարում է հաճախորդների վճարահաշվարկային սպասարկում և մատուցում է բանկային բազմատեսակ ծառայություններ, որոնց մասին ցուցանիշները, դրանց շարժը (դինամիկան) և կանխատեսումները ներկայացված է Աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5. Բանկային ծառայությունների և դրանց շարժի (դինամիկա) բնութագրիչներ

	31.12.05 դրությամբ	31.12.06 դրությամբ	31.12.07 դրությամբ	31.12.08 կանխա- տեսում	31.12.09 կանխա- տեսում	31.12.10 կանխա- տեսում
Իրավաբանական անձ հաճախորդների քանակ	3,316	2,976	3,231	4,976	7,464	9,703
Ֆիզիկական անձ հաճախորդների քանակ	14,880	15,339	24,359	37,513	56,270	73,151
Տեղական քարտեր, հատ	136	1,129	10,447	13,581	19,013	29,470
Միջազգային քարտեր, հատ	14,253	16,833	30,053	39,069	54,697	84,780
Քարտերից օգտվող իրավաբանական անձ հաճախորդների քանակ	53	66	69	106	159	207
Քարտերից օգտվող ֆիզիկական անձ հաճախորդների քանակ	14,336	17,896	30,575	47,086	70,629	91,818
ՀՀ-ում տեղադրված ՊՕՍ- տերմինալների քանակը	36	60	180	234	281	365
ՀՀ -ում տեղադրված ավտոմատ գանձման մեքենաների քանակը	11	18	36	56	72	88
Բանկ-հաճախորդ և այլ նմանատիպ համակարգերից օգտվող հաճախորդների քանակը	68	80	121	145	174	209
Միջազգային փոխանցում (մլն ՀՀ դրամ)	373,410	456,642	478,024	573,629	688,355	826,026

«Հաճախորդների քանակ» տողերը ներառում են բանկային (ավանդային, հաշվարկային և այլ) հաշիվ ունեցող ակտիվ հաճախորդներին

գ. Բանկը ծառայություններ է մատուցում ներքին շուկայում:

Բանկի մասնաբաժինը ՀՀ բանկային համակարգում և զարգացման կանխատեսումները ներկայացված են Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Բանկի մասնաբաժինը ՀՀ բանկային համակարգում

հազ. ՀՀ դրամ

		Ակտիվներ	Վարկային ներդրումներ	Պարտավորություններ	Ընդհանուր կապիտալ	Հաշվեկշռային շահույթ	Կապիտալի տարեկան եկամտաբերություն	Ակտիվների տարեկան եկամտաբերություն
31.12.2005 դրությամբ	Համակարգ	440,674,145	208,144,447	345,913,389	94,760,756	11,977,985	12.64	2.70
	ԲԱՆԿ	71,550,211	16,377,079	64,609,976	6,940,235	2,844,093	40.98	3.97
	%	16.24	7.87	18.68	7.3	23.74	X	x
31.12.2006 դրությամբ	Համակարգ	524,634,072	259,290,647	404,362,097	120,271,975	21,040,758	17.49	4.01
	ԲԱՆԿ	80,267,836	30,958,147	72,091,962	8,175,874	3,155,329	38.59	3.93
	%	15.3	11.94	17.83	6.8	15	x	X
31.12.2007 դրությամբ	Համակարգ	784,079,371	401,719,671	618,037,987	166,041,384	21,213,791	12.8	2.71
	ԲԱՆԿ	104,235,895	52,584,302	92,643,081	11,592,814	3,326,959	28.7	3.19
	%	13.29	13.09	14.99	6.98	15.68	x	X
31.12.2008 դրությամբ	Համակարգ	1,000,000,000	600,000,000	800,000,000	200,000,000	36,000,000	18.0	3.6
	ԲԱՆԿ	120,295,426	76,634,652	104,789,417	15,506,009	3,981,057	25.67	3.31
	%	12.03	12.77	13.1	7.75	11.06	X	X
31.12.2009 դրությամբ	Համակարգ	1,200,000,000	700,000,000	980,000,000	220,000,000	42,000,000	19.09	3.5
	ԲԱՆԿ	153,202,629	102,817,434	132,734,967	20,467,662	4,961,653	24.24	3.24
	%	12.77	14.69	13.54	9.3	11.81	X	X
31.12.2010 դրությամբ	Համակարգ	1,400,000,000	800,000,000	1,150,000,000	250,000,000	55,000,000	22.0	3.93
	ԲԱՆԿ	156,266,681	104,873,783	135,389,666	20,877,015	5,060,886	24.24	3.24
	%	11.16	13.11	11.77	8.35	9.2	x	X

Բանկն իր ծառայությունների մատուցումը կատարում է իր գլխավոր գրասենյակի, մասնաճյուղերի, բանկոմատների միջոցով, մասնակցում է ՀՀ պետական և ՀՀ կենտրոնական բանկի պարտատոմսերի առաջնային տեղաբաշխումներին և արտարժույթի բորսայական գործարքներին:

Բանկի ստացված եկամուտների չափը ներկայացված է աղյուսակ 7-ում:

Աղյուսակ 7. Բանկի ստացված եկամուտներ **հազ. ՀՀ դրամ**

	31.12.05 դրությամբ	31.12.06 դրությամբ	31.12.07 դրությամբ	2008 թվականի երեք եռամսյակ
Եկամուտներ, այդ թվում՝	5,521,756	7,383,003	9,161,194	8,157,743
1. տոկոսային եկամուտներ, որից՝	3,352,637	5,024,423	6,804,835	6,574,210
1.1 տեղաբաշխված վարկերից	2,437,634	4,042,851	5,560,279	5,743,233
1.2 պետական պարտատոմսերից և ՌԵՊՈ համաձայնագրերից	715,784	981,572	1,244,556	830,977

դ. Բանկի հիմնական մրցակիցներ

Ծավալվող կոշտ մրցակցության պայմաններում ՀՀ բանկային շուկայում իր դիրքերի պահպանման և հաճախորդների աճող պահանջների բավարարման նպատակով բանկի կողմից առաջնային են համարվում արդեն իսկ մատուցվող ծառայությունների հետագա զարգացումը: Այդ առումով բանկը առանձնապես կարևորում է իր հիփոթեքային վարկավորման ծրագրերի իրականացումը: Հաշվի առնելով գլխավոր գրասենյակի և նոր մասնաճյուղերի բացումը՝ 2008 թ-ին ակնկալվում է բանկի հաճախորդների թվաքանակի զգալի աճ: Միաժամանակ, նկատի ունենալով վարկավորման տվյալ սեգմենտում օրեցօր աճող մրցակցությունը, բանկը ֆիզիկական անձանց առաջարկում է սպառողական վարկավորման նոր տեսակներ:

Ֆիզիկական անձանց սպասարկման մյուս կարևոր ոլորտն է վճարահաշվարկային ծառայությունների մատուցումը և պլաստիկ քարտերի սպասարկումը: Այս նպատակով բանկը մտադրված է ավելացնել իրեն պատկանող ԱԳՄ-ների ցանցը և քարտերի սպասարկման կետերը:

Առևտրա-վարկային ծառայությունների ոլորտում բանկը շարունակելու է իր ուշադրությունն ուղղել տեղական արտադրանքի ընդլայնման ու արտահանման մեծ ներուժ ունեցող բիզնեսը վարկավորելու հնարավորությունների բացահայտմանը: Առևտրա-վարկային ծառայությունների ծավալների ծրագրավորված աճը նախատեսվում է իրականացնել ոչ միայն բանկի գոյություն ունեցող, այլ նաև նոր հաճախորդների ձեռքբերման հաշվին:

Օգտագործելով աճող ենթակառուցվածքը բանկը մտադիր է հատուկ ուշադրություն դարձնել փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսավորման գործընթացին: Նախատեսված է 2008-2010 թթ ընթացքում մոտ 15 անգամ ավելացնել ներդրումային պորտֆելը:

Առևտրա-վարկային ծառայություններից ստացված տոկոսային եկամուտների աճի հետ մեկտեղ նախատեսվում է նաև ոչ տոկոսային եկամուտների աճ, սակայն ոչ համաչափ ակտիվների աճի տեմպի հետ:

2008-2010-ի ընթացքում բանկը շարունակելու է իր ակտիվների դիվերսիֆիկացման քաղաքականությունը: Վարկային ներդրումների և միջբանկային ավանդների և հաշիվների հետ մեկտեղ, բանկի հաշվեկշռում էական մաս է շարունակելու կազմել ՀՀ պետական

կարճաժամկետ և միջին ժամկետայնության, ինչպես նաև ՀՀ ԿԲ թողարկած պարտատուներում ներդրումները:

Ոչ տոկոսային եկամուտների տեսանկյունից շեշտը գլխավորապես կորվի արտարժույթի փոխանակման ներբանկային և միջբանկային գործառնություններից ստացված եկամուտների, ինչպես նաև առևտրա-վարկային ծառայություններից, հաշիվների սպասարկումից և վճարահաշվարկային ծառայություններից ստացված միջնորդավճարների վրա:

Աղյուսակ 8-ում Ձեր ուշադրությանն ենք ներկայացնում «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի և հիմնական մրցակից բանկերի ֆինանսական ցուցանիշները վերջին 2 տարիների համար և ներկայումս ՀՀ բանկային համակարգում նրանց զբաղեցրած դիրքը.

Աղյուսակ 8. Մրցակից բանկերի ֆինանսական ցուցանիշներ

Հազ. ԱՄՆ դոլար

Բանկի անվանումը	Հաճախորդներից ներգրավված միջոցներ		Մասնաբաժինը համակարգում	Ընդհանուր կապիտալ		Մասնաբաժինը համակարգում	Շահույթ միև հարկումը		Մասնաբաժինը համակարգում	Կապիտալի շահութաբաժնությունը
	31.12.06	31.12.07		31.12.06	31.12.07		31.12.06	31.12.07		
Էյչ-Էս-Բի-Սի	214,207	249,872	19.37%	23,289	34,276	6.18%	11,833	13,460	15.52%	36.15
Արդշինինվեստ	173,981	189,311	14.67%	35,720	59,825	10.79%	8,496	16,348	19.11%	29.95
ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ	46,800	69,596	5.39%	58,748	68,576	12.37%	6,749	12,965	14.84%	16.03
ՎՏԲ	78,422	87,252	6.76%	30,108	66,794	12.05%	3,274	3,219	3.57%	6.89
Կոնվերս	66,306	126,268	9.79%	30,904	35,344	6.38%	6,024	5,758	6.46%	13.36
Հայէկոնոմբանկ	75,609	67,107	5.20%	22,196	27,352	4.94%	6,454	7,647	8.85%	24.77
Յոնիբանկ	78,422	114,841	8.90%	12,237	22,612	4.08%	1,741	1,517	1.65%	4.98

Բանկի անվանումը	Ընդհանուր ակտիվներ		Մասնաբաժինը համակարգում	Տրամադրված վարկեր		Մասնաբաժինը համակարգում	Ներդրումներ արժեթղթերում		Մասնաբաժինը համակարգում
	31.12.06	31.12.07		31.12.06	31.12.07		31.12.06	31.12.07	
Էյչ-Էս-Բի-Սի	258,737	336,971	13.21%	99,701	166,507	12.31%	63,140	69,624	22.71%
Արդշինինվեստ	223,068	302,665	11.87%	100,458	191,679	14.17%	47,180	25,153	9.99%
ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ	169,935	259,053	10.16%	105,029	180,234	13.33%	24,028	7,469	2.44%
ՎՏԲ	147,256	226,116	8.86%	89,073	133,422	9.87%	16,173	21,086	6.88%
Կոնվերս	114,652	189,511	7.43%	39,298	93,674	6.93%	8,954	16,759	5.47%
Հայէկոնոմբանկ	141,782	162,673	6.38%	65,817	91,899	6.80%	24,616	12,783	4.17%
Յոնիբանկ	99,945	147,103	5.77%	47,562	95,503	7.06%	11,235	11,343	3.50%

է. Բանկի կողմից կնքված այն պայմանագրերը, որոնք գտնվում են գործողության մեջ, ինչպես նաև Ազդագրի գրանցման ներկայացմանը նախորդող վերջին 3 տարվա ընթացքում Բանկի կնքված այն պայմանագրերի պայմանները, որոնց գինը գերազանցում է Բանկի ակտիվների հաշվեկշռված արժեքի 5 տոկոսը.

Կատարման օր	Մարման օր	Գործարքի տիպը	Ծավալը ԱՄՆ դոլար	Գործարքի կողմը
11 հունվար 2007	12 հունվար 2007	օվերնայթ դեպոզիտ	16,000,000	ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ ԱՄՆ
27 հուլիսի 2007	30 հուլիսի 2007	օվերնայթ դեպոզիտ	19,000,000	ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ ԱՄՆ
30 հուլիսի 2007	31 հուլիսի 2007	օվերնայթ դեպոզիտ	20,000,000	ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ ԱՄՆ
31 հուլիսի 2007	1 օգոստոսի 2007	օվերնայթ դեպոզիտ	19,000,000	ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ ԱՄՆ
1 օգոստոսի 2007	2 օգոստոսի 2007	օվերնայթ դեպոզիտ	20,000,000	ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ ԱՄՆ
2 օգոստոսի 2007	3 օգոստոսի 2007	օվերնայթ դեպոզիտ	18,000,000	ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ ԱՄՆ
27 նոյեմբերի 2007	12 դեկտեմբեր 2007	փոխառություն	17,000,000	ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ Փի-Էլ-Սի
30 նոյեմբերի 2007	3 դեկտեմբերի 2007	օվերնայթ դեպոզիտ	19,000,000	ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ ԱՄՆ

Նշված ծավալը գերազանցող արտարժույթի կանխիկացման և ապականխիկացման թվով երկու գործարքներ չեն ընդգրկվել վերը նշված աղյուսակում և այդ մասին սահմանված կարգով Կենտրոնական բանկ է ներկայացվել «Գաղտնիությունը հարգելու մասին» դիմում: Գաղտնի փաստաթուղթը չի կցվել ազդագրին և ներկայացվել է միայն Կենտրոնական բանկ: Նշված ծավալը գերազանցող գործարքները բացառապես միջբանկային շուկայում կնքված պայմանագրեր են, այդ թվում՝ օվերնայթ դեպոզիտներ, արտարժույթի կանխիկի և անկանխիկի փոխանակման գործարքներ: Ժամկետանց պայմանագրեր չեն եղել:

Ազդագիրը ներկայացնելու պահին Բանկի կողմից կնքված վերը նշված ծավալը գերազանցող գործող և/կամ ժամկետանց պայմանագրեր չկան:

3. Այն անձանց անվանացանկը, որտեղ Բանկը, ներառյալ նրա դուստր ընկերությունները, բաժնային արժեթղթերի նշանակալից կամ խոշոր սեփականատեր են.

Բանկն այլ անձանց բաժնային արժեթղթերի նշանակալից կամ խոշոր սեփականատեր չի հանդիսանում:

Բանկը դուստր ընկերություններ չունի:

4. Հարկային արտոնությունները.

Բանկի համար հատուկ հարկային արտոնություններ սահմանված չեն, Բանկը գործում է ընդհանուր հարկային օրենսդրական դաշտում:

5. Դատական և իրավական ընթացակարգը.

Ազդագրի գրանցման հայտի ներկայացմանը նախորդող 12 ամսվա ընթացքում Բանկի նկատմամբ դատարանի կողմից պատասխանատվության միջոցներ չեն կիրառվել:

ՀՀ կենտրոնական բանկի կողմից արձանագրված խախտումներն են՝

1. ՀՀ կենտրոնական բանկի իրավաբանական վարչության լիցենզավորման և գրանցման բաժնի 05.06.2008թ. թիվ 20/01 արձանագրությամբ արձանագրվել է «ԷյՋ-Էս-Բի-Սի Բանկ

Հայաստան» ՓԲԸ-ի կողմից բանկերի գործունեությունը կարգավորող իրավական ակտի խախտում, մասնավորապես՝ Բանկը սկսած 15.04.2008թ.-ից առանց ՀՀ կենտրոնական բանկի համաձայնության վերանորոգման նպատակով ժամանակավորապես դադարեցրել է Բանկի «Կոմիտաս-1» սահմանափակ ֆինանսական գործառնություններ իրականացնող մասնաճյուղի գործունեությունը:

Վերը նշված խախտման համար ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 04.07.2008թ. թիվ 1/32 բզԱ որոշմամբ «Էյջ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի նկատմամբ նշանակվել է տուգանք՝ 100 000 (հարյուր հազար) դրամ գումարի չափով:

Նշանակված տուգանքը վճարվել է:

Վերանորոգումից հետո մասնաճյուղը վերսկսել է իր գործունեությունը:

2. ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության 11.07.2008թ. թիվ 20/02 արձանագրությամբ արձանագրվել է «Էյջ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից բանկերի գործունեությունը կարգավորող իրավական ակտերի խախտում, մասնավորապես ՀՀ ԿԲ վարկային ռեգիստրում սխալ են արտացոլվել թվով մեկ վարկառուի և նրան տրամադրված վարկերի մասին որոշ տվյալները:

Վերը նշված խախտման համար ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 07.08.2008թ. թիվ 1/38 բզԱ որոշմամբ «Էյջ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին հայտարարվել է նախազգուշացում՝ ապագայում նման խախտումները կանխելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարականով:

Ազդագրի գրանցման հայտի ներկայացման պահի դրությամբ խախտումը վերացվել է:

3. ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության 25.07.2008թ. թիվ 20/03 արձանագրությամբ արձանագրվել է «Էյջ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից բանկերի գործունեությունը կարգավորող իրավական ակտի խախտում, մասնավորապես ՀՀ ԿԲ Ֆինանսական վերահսկողության վարչության կողմից բանկին ուղարկված ծանուցման ի պատասխան ներկայացվել են անարժանահավատ տեղեկություններ:

Վերը նշված խախտման համար ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 22.08.2008թ. թիվ 1/42 բզԱ որոշմամբ «Էյջ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին հայտարարվել է նախազգուշացում՝ ապագայում նման խախտումները կանխելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարականով:

Ազդագրի գրանցման հայտի ներկայացման պահի դրությամբ խախտումը վերացվել է:

4. ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական վերահսկողության վարչության 28.08.2008թ. թիվ 20/04 արձանագրությամբ արձանագրվել է «Էյջ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից բանկերի գործունեությունը կարգավորող իրավական ակտի խախտում, մասնավորապես ՀՀ ԿԲ ներկայացված թիվ 2 հաշվետվության մեջ սխալ են արտացոլվել որոշ հաշվեկշռային հաշիվների մացորդները:

Վերը նշված խախտման համար ՀՀ կենտրոնական բանկի նախագահի 25.09.2008թ. թիվ 1/67 բզԱ որոշմամբ «Էյջ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ին հայտարարվել է նախազգուշացում՝ ապագայում նման խախտումները կանխելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարականով:

Ազդագրի գրանցման հայտի ներկայացման պահի դրությամբ խախտումը վերացվել է:

5. ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության բանկերի և վարկային կազմակերպությունների հարկային տեսչության կողմից «Էյջ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ում 09.01.2008-01.07.2008թթ. իրականացվել է բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության և հարկային մարմնի կողմից վերահսկվող օրենսդրության առանձին պահանջների կատարման ճշտության ստուգում:

Ստուգման արդյունքում կազմված ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 01.07.2008թ. թիվ 1035514 ակտով արձանագրվել են «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտումներ, մասնավորապես

- «Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից 12.04.07թ-ին Հարկային տեսչություն ներկայացված 2006 թվականի Շահութահարկի հաշվարկի՝ համախառն եկամտից նվազեցումների մեջ ներառվել են բանկի հաշվետեր չհանդիսացող ֆիզիկական անձանց հետ արտարժույթի առք ու վաճառքի գործառնություններ իրականացնելիս, ֆիզիկական անձանցից (որոնց տվյալները ամբողջական չեն) ՀՀ կենտրոնական բանկի հաշվարկային փոխարժեքից բարձր կուրսով գնված արտարժույթից և նույն փոխարժեքից ցածր կուրսով վաճառված արտարժույթից առաջացած վնասները:
- 2006թ.ի ընթացքում ձեռք բերված հիմնական միջոցների մաշվածությունը հաշվարկվել է սկսած գնման ամսվա առաջին օրվանից: Վերահաշվարկի արդյունքում պարզվեց, որ 2006թ-ի շահութահարկի հաշվարկի ժամանակ համախառն եկամտից ավել նվազեցում է կատարվել հիմնական միջոցների մաշվածության գծով:
- «Էյչ Էս Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ-ի 2006 թվականի Շահութահարկի հաշվարկի՝ համախառն եկամտից նվազեցումների մեջ ներառվել է վարձակալված ոչ գործառնական շենք, շինությունների և գույքի սպահովագրության արժեքը:

Վերը նշված խախտումների արդյունքում ՀՀ պետական բյուջե լրացուցիչ վճարվել է շահութահարկ 5,846.6 հազ. դրամ, ինչպես նաև տույժ և տուգանք՝ 9,062.3 հազ. դրամի չափով:

Ազդագրի գրանցման հայտի ներկայացման պահի դրությամբ խախտումները վերացվել են:

6. Փոխկապակցված գործարքների վերաբերյալ տեղեկություններ.

Վերջին տարվա ընթացքում Բանկի հետ փոխկապակցված անձանց հետ Բանկի կողմից կնքված պայմանագրերի արժեքը չի գերազանցել Բանկի ակտիվների հաշվեկշռային արժեքի 1 և ավելի տոկոսը:

Վերջին 12 ամսվա ընթացքում Բանկի հետ փոխկապակցված անձանց հետ 2,000 հազ. ՀՀ դրամը գերազանցող Բանկի կողմից կնքված պայմանագրերի պայմանները ներկայացված են աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9. Բանկի հետ փոխկապակցված անձանց Բանկի կողմից կնքված պայմանագրերի պայմանները

	Պայմանագրի կողմի անվանումը (անուն, ազգանուն)	Պայմանագրի առարկան	Կատարման ամսաթիվը	Գործարքի արժեքը, (հազ. ՀՀ դրամ)	Գործարքի արժեքի մասնաբաժինը Բանկի 2008թ. 3-րդ եռամսյակի դրությամբ զուտ շահույթի մեջ, %-ով
Ժամանակահատված՝ 21.11.07-21.11.08					
1	Արա Ալեքսանյան	Կրեդիտ քարտ	11.02.2002	3,150	0.11
2	Թիմ Սլեյքեր	Կրեդիտ քարտ	27.11.2007	3,000	0.1065
3	Իրինա Սեյլանյան	Հողի վարկ	28.06.2007	18,121	0.8288
		Հիփոթեկային վարկ	16.06.2008	66,500	2.361
4	Ռուզաննա Շահինյան	Կրեդիտ քարտ	17.11.2003	2,500	0.0887
5	Սկրտիչ Լորեցյան	Հիփոթեկային վարկ	20.07.2007	25,029	0.8887
6	Մարիամ Կարամանուկյան	Ավտոմեքենայի վարկ	04.06.2008	4,950	0.1757
7	Լևոն Սահակյան	Վերանորոգման վարկ	03.10.2007	3,605	0.128
8	Էյջ-Էս-Բի-Սի փլս	Ստացած փոխառություն	12.10.2006	69,422	2.465
		Տրամադրած վարկ	29.09.2008	57,208	2.031
9	Էյջ-Էս-Բի-Սի Վրաստան	Ստացած փոխառություն	14.11.2008	917,940	32.59
		Ստացած փոխառություն	20.11.2008	917,940	32.59
10	Էյջ-Էս-Բի-Սի Ռուսաստան	Օվերնայթ դեպոզիտ	21.11.2008	55,700	1.9777

Նշված ծավալը գերազանցող արտարժույթի փոխանակման թվով վեց ֆորվարդային գործարքներ չեն ընդգրկվել վերը նշված աղյուսակում և այդ մասին սահմանված կարգով Կենտրոնական բանկ է ներկայացվել «Գաղտնիությունը հարգելու մասին» դիմում:

Գաղտնի փաստաթուղթը չի կցվել ազդագրին և ներկայացվել է միայն Կենտրոնական բանկ: Ազդագրի հայտի ներկայացման պահին փոխկապակցված ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ գործարքներ չեն նախատեսվում:

Բանկը Էյջ-Էս-Բի-Սի Բանկ փլս-ի հետ օրական կտրվածքով կատարում է թվով 5-ից 10 արտարժույթի փոխանակման և օվերնայթ դեպոզիտի գործարքներ, որոնք անհրաժեշտ են Բանկի առօրյա գործունեությունը ապահովելու համար:

7. Բանկի նախատեսվող գործունեությունը և հեռանկարները.

ա. Իր առաքելության կատարման համար Բանկը նպատակադրված է իրականացնել.

Հաճախորդների սպասարկման որակի բարձրացում, բանկային նոր ծառայությունների ներմուծում և առկա ծառայությունների ընդլայնում: Առանձնակի ուշադրություն դարձնել ֆիզիկական անձանց առաջարկվող բանկային ծառայությունների ընդլայնմանը, մասնավորապես.

- ▶ ընդլայնել մասնաճյուղերի ցանցը ինչպես Երևանում, այնպես էլ ՀՀ մարզերում

- ▶ ավելացնել հիփոթեքային և սպառողական վարկերի պորտֆելը՝ հաճախորդներին առաջարկելով առավել բարենպաստ և մրցունակ պայմաններ.
- ▶ ավելացնել քարտային ծառայություններից օգտվող հաճախորդների քանակը առաջարկելով բարձրորակ և մատչելի սպասարկում
- ▶ ընդլայնել բանկին պատկանող ավտոմատ գանձման մեքենաների (ԱԳՄ) ցանցը Երևանում և մարզերում
- ▶ ընդլայնել առաջարկվող ծառայությունների ցանկը, մասնավորապես առաջարկելով Բանկ-Հաճախորդ նոր էլեկտրոնային բանկային ծառայությունը

Շարունակել զարգացնել կորպորատիվ հաճախորդներին մատուցվող առևտրա-վարկային ծառայությունները նպատակ ունենալով պահպանել բանկի առաջատար դիրքերը այս սեգմենտում:

Շարունակել ակտիվների դիվերսիֆիկացիան՝ ավանդների ապահովության պահպանման, ընդհանուր ակտիվների ավելացման, ինչպես նաև կոնցենտրացիայի ռիսկը զսպելու նպատակով:

Մոտակա տարիներին Բանկի գործունեության ցուցանիշները ներկայացված են «Բանկի ֆինանսական միջնորդության ծառայությունների հիմնական բնութագրիչները» Աղյուսակ 4-ում:

բ. Բանկի հիմնական եկամուտների աղբյուրների կանխատեսումները ներկայացված են ստորև Աղյուսակ 10-ում:

Աղյուսակ 10. Բանկի եկամուտների կանխատեսումները

հազ. ՀՀ դրամ

	31.12.08 դրությամբ	31.12.09 դրությամբ	31.12.10 դրությամբ
1. Տոկոսային եկամուտներ, այդ թվում՝	9,144,460	12,920,239	13,178,644
<i>վարկերից</i>	<i>7,786,026</i>	<i>11,766,946</i>	<i>12,002,285</i>
2. Մատուցված այլ ծառայություններից (արտարժույթի առուվաճառք, միջնորդավճարներ, այլն)	3,731,549	4,326,872	4,413,409
Ընդամենը	12,876,009	17,247,111	17,592,053

գ. Մոտակա տարիներին Բանկի գործունեության համար անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսները Բանկը նախատեսում է ձևավորել Բանկի սեփական կապիտալի և ներգրավված միջոցների դինամիկ աճով, որոնց կանխատեսումները ներկայացված են Աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11. Բանկի ռեսուրսների կազմի կանխատեսումները

հազ. ՀՀ դրամ

	31.12.08 դրությամբ	31.12.09 դրությամբ	31.12.10 դրությամբ
1. Սեփական կապիտալ, այդ թվում՝	15,506,009	20,467,662	20,877,015
<i>կանոնադրական կապիտալ</i>	<i>2,437,600</i>	<i>2,437,600</i>	<i>2,437,600</i>
2. Պարտավորություններ, այդ թվում՝	104,789,417	132,734,967	135,389,666
<i>ներգրավված միջոցներ</i>	<i>102,289,417</i>	<i>130,034,967</i>	<i>132,635,666</i>
Ընդամենը	120,295,426	153,202,629	156,266,681

Բանկի գործունեության արդյունքների ցուցանիշների կանխատեսումները ներկայացված են Աղյուսակ 12-ում:

Աղյուսակ 12. Բանկի գործունեության արդյունքների կանխատեսումները

հազ. ՀՀ դրամ

	31.12.08 դրությամբ	31.12.09 դրությամբ	31.12.10 դրությամբ
1. Եկամուտներ, այդ թվում՝	12,876,009	17,157,111	17,500,253
<i>տոկոսային եկամուտներ</i>	<i>9,144,460</i>	<i>12,920,239</i>	<i>13,178,644</i>
2. Ծախսեր, այդ թվում՝	(7,732,042)	(10,724,118)	(10,938,600)
<i>տոկոսային ծախսեր</i>	<i>(1,411,624)</i>	<i>(2,878,341)</i>	<i>(2,935,908)</i>
3. Չուտ մասհանում	(34,490)	(71,900)	(73,338)
4. Շահույթ	5,109,477	6,361,093	6,488,315
6. Շահութահարկ	(1,128,420)	(1,399,440)	(1,427,429)
7. Չուտ շահույթ	3,981,057	4,961,653	5,060,886

դ. 2008 թվականին Բանկի կողմից բացվել է ՀՀ-ում նախադեպը չունեցող Գործառնությունների Ազգային Կենտրոն, որտեղ համախմբված են Բանկի հաճախորդների սպասարկման հետ անմիջական կապ չունեցող բոլոր ֆունկցիաները (Back Office): Այդ ֆունկցիաները տեղափոխելով Կենտրոն՝ մասնաճյուղերը կազատվեն ավելորդ ծանրաբեռնվածությունից: Նշված միջոցառումները հնարավորություն կընձեռեն անհամեմատ բարձրացնել հաճախորդների սպասարկման մակարդակը, ինչպես նաև ներգրավել նոր հաճախորդներ: 2009 թվականի առաջին եռամսյակում Երևան քաղաքում Բանկը նախատեսում է ևս 1 նոր մասնաճյուղի բացում: 2009-2010 թթ նախատեսվում է առնվազն 6 մասնաճյուղերի բացում ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում, այսպիսով մասնաճյուղերի թիվը 2010 թվականին հասցնելով 17-ի:

ե. Բանկն առաջնակարգ կարևորում է տեղեկատվական համակարգի ծրագրային սպահովման զարգացման աշխատանքները: 2007 թվականին Բանկի HEXAGON էլեկտրոնային բանկային համակարգը փոխարինվեց նոր, ավելի կատարյալ HSBCnet համակարգով: 2009 թվականին նախատեսվում է անհատ հաճախորդների համար էլեկտրոնային բանկային համակարգի (Internet Banking) համակարգի ներդրում:

Ամփոփելով Բանկի հեռանկարային գործունեության կանխատեսումների համառոտ նկարագիրը, ներդրողներին տեղեկացնում ենք, որ Բանկը մշակել և իրականացնում է իր գործունեության ռազմավարությունը և քաղաքականությունը, որոնք չեն սահմանափակված Ազդագրում ներկայացված տեղեկատվությամբ և ցուցանիշներով:

ԳԼՈՒԽ 3. ԲԱՆԿԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. Ֆինանսական հաշվետվություններ.

Բանկի 2005-2007թ.թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունները և 2008թ. 3-րդ եռամսյակի միջանկյալ հաշվետվությունները ներկայացված են Ազդագրին կից ներկայացվող փաստաթղթերի կազմում:

Ցանկության դեպքում ներդրողները Բանկի ֆինանսական հաշվետվությունները կարող են ձեռք բերել նաև Բանկի գլխավոր գրասենյակից և մասնաճյուղերից, ինչպես նաև ծանոթանալ դրանց Բանկի ինտերնետային կայքում:

2. Ֆինանսական վիճակի, գործունեության արդյունքների փոփոխությունների վերաբերյալ տեղեկություններ.

Ստորև աղյուսակ 13-ում ներկայացված են Բանկի գործունեության հիմնական արդյունքների վերաբերյալ Ազդագրի ներկայացմանը նախորդող վերջին երեք տարիների ցուցանիշները:

**Աղյուսակ 13. Բանկի ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների ցուցանիշներ
հազ. ՀՀ դրամ**

	31.12.05 դրությամբ	31.12.06 դրությամբ	Աճ, %	31.12.07 դրությամբ	Աճ, %
Ակտիվներ, այդ թվում`	71,550,211	80,267,836	12.18	104,235,895	29.86
<i>հաճախորդներին տրված վարկեր և այլ փոխաստվություն</i>	<i>16,377,079</i>	<i>30,958,147</i>	<i>89.03</i>	<i>52,584,302</i>	<i>69.86</i>
Պարտավորություններ, այդ թվում`	64,609,976	72,091,962	11.58	92,643,081	28.51
<i>հաճախորդներից ներգրավված միջոցներ</i>	<i>61,891,720</i>	<i>69,435,574</i>	<i>12.19</i>	<i>81,872,052</i>	<i>17.91</i>
Սեփական կապիտալ, այդ թվում`	6,940,235	8,175,874	17.8	11,592,814	41.79
<i>կանոնադրական կապիտալ (փաստացի վճարված)</i>	<i>2,437,600</i>	<i>2,437,600</i>	<i>0</i>	<i>2,437,600</i>	<i>0</i>
Զուտ շահույթ (վնաս)	2,844,093	3,155,329	10.94	3,326,959	5.44
Ակտիվների տարեկան եկամտաբերություն (%)	3.97	3.93	x	3.19	x

Համառոտ ամփոփելով աղյուսակ 13-ի ցուցանիշները, կարելի է փաստել, որ Ազդագրի ներկայացմանը նախորդող երեք տարիների ընթացքում Բանկի գործունեության հիմնական ցուցանիշներն ունեցել են անընդհատ աճի տեմպեր: Բանկը մտադիր է պահպանել նախորդ 3 տարիներին գրանցված աճի տեմպերը և նվաճողական գործելակերպը:

3. Բանկի ֆինանսական գործունեությունը.

ա. Բանկի ռեսուրսների կառուցվածքը ներկայացված է աղյուսակ 14-ում:

Աղյուսակ 14. Բանկի ռեսուրսները

հազ. ՀՀ դրամ

	31.12.2005 դրությամբ	Տես. կշիռ %	31.12.2006 դրությամբ	Տես. կշիռ %	31.12.2007 դրությամբ	Տես. կշիռ %	Աճ (%), 31.12.2005 նկատմ.
Ռեսուրսներ, ընդամենը, այդ թվում՝	71,550,211	100.0	80,267,836	100.0	104,235,895	100.0	45.68
<i>Սեփական կապիտալ</i>	<i>6,940,235</i>	<i>9.7</i>	<i>8,175,874</i>	<i>10.16</i>	<i>11,592,814</i>	<i>11.12</i>	<i>67.04</i>
Պարտավորություններ, որից՝	64,609,976	90.3	72,282,275	89.84	92,643,081	88.88	43.39
<i>հաճախորդներից ներգրավված միջոցներ</i>	<i>61,891,720</i>	<i>86.5</i>	<i>66,404,180</i>	<i>82.53</i>	<i>81,872,052</i>	<i>78.54</i>	<i>32.28</i>
Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների սահմանային հարաբերակցությունը (ընդհանուր իրացվելիություն), %							
նորմատիվ	20.00		20.00		15.00		
փաստացի	68.65		56.27		46.19		
Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցայահանջ պարտավորությունների գումարների միջև սահմանային հարաբերակցությունը (ընթացիկ իրացվելիություն), %							
նորմատիվ	80.00		80.00		60.00		
փաստացի	87.81		81.17		83.1		

Ֆինանսական միջնորդություն կատարող անձանց, այդ թվում՝ բանկերի, բնականոն գործունեության համար ռեսուրսների գլխավոր աղբյուրներն են հանդիսանում սեփական կապիտալը և ներգրավված միջոցները:

31.12.05թ.-ի նկատմամբ, 31.12.07թ.-ին Բանկի ռեսուրսներն աճել են 45.68%-ով, ընդ որում, աճ է արձանագրվել ռեսուրսների բոլոր աղբյուրների գծով: Բանկի սեփական կապիտալն աճել է 67.04%-ով, պարտավորությունները՝ 43.39%-ով, հաճախորդներից ներգրավված միջոցները՝ 32.28%-ով:

Բանկի ռեսուրսների շարունակական և անընդհատ աճը իր հերթին հնարավորություն է տվել Բանկին կտրուկ մեծացնել հաճախորդներին տրվող վարկերի ծավալները, մեծացնել շահույթը, ապահովել Բանկի ակտիվների աճը:

Բանկի պարտավորությունների կատարման մակարդակը բնորոշող, աղյուսակ 14-ում ներկայացված, ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված ընդհանուր և ընթացիկ իրացվելիության փաստացի ցուցանիշները վկայում են, որ Բանկի պարտավորությունների կատարման հնարավորությունները պահպանվել են բարձր մակարդակի վրա:

բ. Բանկը մոտակա տարիներին պլանավորում է սեփական կապիտալի դինամիկ աճ, որն ապահովելու է շահույթի հաշվին:

Բանկի սեփական կապիտալի աճի կանխատեսումները մոտակա տարիներին ներկայացված են «Բանկի ռեսուրսների կազմի կանխատեսումները» Աղյուսակ 11-ում:

Բանկին հայտնի չի սեփական կապիտալի նվազման որևէ միտում:

4. Շահույթի կանխատեսումը և գնահատումը.

Սույն կետում նշված տեղեկություններն ընդամենը կանխատեսումներ են և ներդրումային որոշումներ կայացնելիս չպետք է հիմնվել դրանց վրա:

ա. Մոտակա տարիների գործունեության և շահույթի կանխատեսումներում Բանկը հիմնվել է հետևյալ հիմնարար սկզբունքների վրա.

- ▶ Բանկի գործունեությունը նպատակամղել շահույթի, բաժնետիրական կապիտալի և ակտիվների եկամտաբերության աճին
- ▶ Բանկի ռեսուրսները տեղաբաշխել բարձր եկամտաբերություն ունեցող և միևնույն ժամանակ հուսալի ակտիվներում՝ ընդունելի մակարդակի վրա պահելով Բանկի ռիսկերը, պահպանելով բանկերի գործունեությունը կարգավորող, ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված տնտեսական նորմատիվները
- ▶ ավելացնել Բանկի եկամտաբեր ծառայությունների տեսականին
- ▶ ապահովել Բանկի դինամիկ զարգացման համար անհրաժեշտ մասնաճյուղերի ստեղծում, տեխնիկատեխնոլոգիական, տեղեկատվական համակարգերի արդիական մակարդակի պահպանում
- ▶ ապահովել Բանկի զարգացմանը համահունչ անձնակազմի վարձատրության, պատրաստման և վերապատրաստման, ինչպես նաև Բանկի պահպանման ծախսերի իրականացում:

Բանկի շահույթի կանխատեսումները ներկայացված են «Բանկի գործունեության արդյունքների կանխատեսումները» Աղյուսակ 12-ում:

բ. Բանկի կառավարման մարմինները հնարավորություն ունեն ազդելու (կառավարելու) Բանկի գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.

- ▶ Բանկի ներգրավվող և տեղաբաշխվող միջոցների ծավալները
- ▶ Բանկի ռիսկերի ընդունելի մակարդակի պահպանում
- ▶ Բանկի տեխնիկատեխնոլոգիական և տեղեկատվական ապահովման ուղղությամբ կատարվող ծախսեր
- ▶ մասամբ Բանկի անձնակազմի վարձատրության, պատրաստման և վերապատրաստման, ինչպես նաև Բանկի պահպանման ծախսեր
- ▶ նոր բանկային գործիքների և ծառայությունների ներդրում:

գ. Բանկի կառավարման մարմինները կարող են արձագանքել, սակայն հնարավորություն չունեն ազդելու Բանկի գործունեության և շահույթի վրա ազդող հետևյալ հիմնական գործոնների վրա.

- ▶ բանկային ավանդների ու վարկերի առաջարկի ու պահանջարկի և դրանից բխող տոկոսադրույքների փոփոխության վարքագիծ
- ▶ արժեզրկման ու փոխարժեքի վարքագիծ
- ▶ անհատթահարելի ուժի ազդեցության գործոններ (արտակարգ դրության հայտարարելը, հաղորդակցության միջոցների աշխատանքների դադարեցումը, բնական աղետները, պատերազմը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Բանկի բնականոն գործունեությունը):

դ. Բանկը կանխատեսել է 2008 թվականի գործունեության արդյունքում ստանալ 3,981,057 հազ. ՀՀ դրամի գուտ շահույթ (տես աղյուսակ 12-ը): Փաստացի 31.09.08թ.–ի դրությամբ գուտ շահույթը կազմել է 2,816,303 հազ. ՀՀ դրամ: Ազդագրի գրանցման հայտի

ներկայացման պահին Բանկի ունեցած ցուցանիշները և տեղեկատվությունը սեզոնային համեմատության մեջ դնելով նախորդ տարիներին փաստացի կատարվածի հետ կարելի է հանգել այն ենթադրությանը, որ 2008թ.-ի գործունեության արդյունքներով զուտ շահույթի կանխատեսումը իրատեսական է:

Բանկի վերջին տարիների գործունեության արդյունքների ցուցանիշները համադրելի են, իսկ գնահատումները կատարված են 13 և 14 աղյուսակները ամփոփող տեքստում:

ԳԼՈՒԽ 4. ԲԱՆԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԱՆՁԻՆՔ


1. Ընդհանուր տեղեկություններ կառավարման մարմինների վերաբերյալ.

ա. կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը, թողարկողի կանոնադրությամբ վերապահված իրավասությունները

Բանկի կանոնադրությամբ, սահմանված են Բանկի կառավարման հետևյալ մարմինները.

- ▶ Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովը (այսուհետ՝ Ժողով)
- ▶ Բանկի Խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ)
- ▶ Բանկի գործադիր մարմինը՝ Բանկի գլխավոր գործադիր տնօրեն

Կառավարման մարմինների սխեմատիկ կառուցվածքը ներկայացված է ստորև.



Բանկի Ժողովը

Ժողովը Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է:

Ժողովի հիմնական իրավասություններն են՝

ա) Բանկի կանոնադրության հաստատումը, ինչպես նաև կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելը, կանոնադրությունը նոր խմբագրությամբ հաստատելը.

բ) Բանկի կանոնադրական հիմնադրամի փոփոխումը.

- զ) Բանկի վերակազմակերպման ու լուծարման հարցերը, լուծարային հանձնաժողովի նշանակման, միջանկյալ, ամփոփ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը.
- դ) Բանկի հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը.
- ե) Բանկի խորհրդի քանակական կազմի հաստատումը, խորհրդի անդամների ընտրությունը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, խորհրդի անդամների վարձատրության չափի սահմանումը.
- զ) Խորհրդի ներկայացմամբ Բանկի անկախ աուդիտն իրականացնող անձի հաստատումը.
- է) Բանկի տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշռի, շահույթների և վնասների բաշխման, ինչպես նաև աուդիտորական եզրակացության հաստատումը.
- ը) Բանկի կրած վնասների, կորուստների դիմաց պահուստավորման գումարի սահմանումը կամ այդպիսի վնասներ կրելու ռիսկի այլ կերպ ապահովումը.
- թ) Բանկի տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը, տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի հաստատումը.
- ժ) Բանկի գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ օրենքով սահմանված դեպքերում.
- ժա) Բանկի գործարքներում շահագրգռվածություն ունեցող անձանց հետ գործարքների կնքման մասին որոշման ընդունումը՝ օրենքով սահմանված դեպքերում.
- ժբ) Բանկի դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը, դուստր և կախյալ ընկերություններին մասնակցությունը, առևտրային կազմակերպությունների միությունների հիմնադրումը և դրանց մասնակցությունը.
- ժգ) Կանոնադրությամբ (Ազդագրին կցվում է) և օրենքով սահմանված այլ լիազորություններ:

Բանկի Խորհուրդը

Խորհուրդն իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր դեկավարումը՝ օրենքով և Բանկի կանոնադրությամբ Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի սահմաններում:

Խորհրդի հիմնական իրավասություններն են՝

- ա) Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը՝ ներառյալ Բանկի հեռանկարային զարգացման ծրագրի հաստատումը.
- բ) Բանկի բաժնետերերի ընդհանուր ժողովի տարեկան և արտահերթ նիստերի գումարումը, դրանց օրակարգի հաստատումը, ինչպես նաև դրանց գումարման և անցկացման կազմակերպման հետ կապված նախապատրաստական աշխատանքների իրականացման ապահովումը.
- գ) Բանկի գույքի շուկայական արժեքի որոշումը՝ օրենքով սահմանված դեպքերում.
- դ) Բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանումը, Բանկում ներքին աուդիտի ստորաբաժանման ձևավորումը, նրա տարեկան աշխատանքային ծրագրի հաստատումը, ներքին աուդիտի աշխատակիցների լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.
- ե) Բանկի տարեկան ծախսերի նախահաշվի և կատարողականի հաստատումը.

զ) Բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատմանը Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի ներկայացումը և Բանկի արտաքին աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափի սահմանումը.

է) Բանկի բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ բաժնետերերի ընդհանուր ժողովի համար առաջարկությունների նախապատրաստումը և միջանկյալ շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը.

ը) Պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.

թ) Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման մասին որոշման ընդունումը.

ժ) Բանկի գույքի փոխանցման հետ կապված խոշոր և շահագրգռվածության առկայությամբ կնքվող գործարքների կնքումը՝ օրենքով նախատեսված դեպքերում.

ժա) Բանկի ներքին վարչակազմակերպական կառուցվածքի և աշխատատեղերի հաստատումը և կադրային քաղաքականության որոշումը.

ժբ) Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և ընդհանուր ժողովին ներկայացումը.

ժգ) Բանկի տարածքային և ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրությունների հաստատումը և կառուցվածքային ստորաբաժանումների միջև գործառնության պարտականությունների բաշխումը.

ժդ) Բանկի հաշվապահական հաշվառման քաղաքականության սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և կարգերի սահմանումը.

ժե) Բանկի կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը, այդ թվում ֆինանսական գործառնությունների և վերահսկողության իրականացման կանոնակարգերի հաստատումը.

ժզ) Բանկի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների հիմնումը, վերակազմակերպումը և լուծարումը.

ժէ) Բանկի գլխավոր գործադիր տնօրենի, ինչպես նաև գլխավոր գործադիր տնօրենի ներկայացմամբ՝ գլխավոր գործադիր տնօրենի տեղակալի և գլխավոր հաշվապահի նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը և վարձատրության պայմանների հաստատումը.

ժը) Բաժնետերերի ընդհանուր ժողովի ոչ բացառիկ իրավասությանը վերապահված այլ հարցեր, որոնք ընդհանուր ժողովի որոշմամբ ժամանակ առ ժամանակ կփոխանցվեն Բանկի խորհրդի իրավասությանը.

ժթ) օրենքով նախատեսված այլ որոշումների ընդունումը:

Գործադիր մարմինը

Բանկի գործունեության ընթացիկ ղեկավարումը իրականացնում է գլխավոր գործադիր տնօրենը: Բանկում տնօրինություն չի ստեղծվում: Գլխավոր գործադիր տնօրենը նշանակվում է խորհրդի կողմից: Բանկի մյուս ղեկավարները նշանակվում են գլխավոր գործադիր տնօրենի կողմից, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

Գլխավոր գործադիր տնօրենի իրավասությանն են պատկանում բոլոր այն հարցերը, որոնք օրենքով կամ սույն կանոնադրությամբ չեն հանդիսանում բաժնետերերի ընդհանուր ժողովի, խորհրդի, ներքին աուդիտի ստորաբաժանման կամ գլխավոր հաշվապահի իրավասությունը:

Գլխավոր գործադիր տնօրենը՝

- ▶ Բանկը ներկայացնում է երրորդ անձանց հետ հարաբերություններում, պետական կազմակերպություններում, դատական և այլ մարմիններում.
- ▶ տնօրինում է Բանկի գույքը և ֆինանսական միջոցները, գործարքներ և պայմանագրեր է կնքում Բանկի անունից.
- ▶ աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում է Բանկի աշխատողներին, կնքում է աշխատանքային պայմանագրեր.
- ▶ գործում է առանց լիազորագրի, տալիս է լիազորագրեր.
- ▶ իրականացնում է օրենքով և Կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

Գլխավոր գործադիր տնօրենի բացակայությամբ գլխավոր գործադիր տնօրենի պարտականություններն իրականացնում է գլխավոր գործադիր տնօրենի տեղակալը, իսկ վերջինիս բացակայությամբ օրենքով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում՝ Բանկի մեկ այլ ղեկավար՝ համաձայն լիազորությունների փոխանցման պատշաճ արձանագրության:

բ) տեղեկություններ Բանկի կառավարմանը մասնակցող անձանց վերաբերյալ

Բանկի Խորհրդի նախագահ՝ Վաչէ Մանուկեան

Բնակության վայրը	29 Փոնթ փողոց, Լոնդոն, SW1X OAZ
Մասնագիտությունը	գործարար
Վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները	1995թ. - մինչ օրս՝ «Էյչ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան» փբը, ընկերության խորհրդի նախագահ Հանդիսանում է նաև Հայաստան համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ
Տվյալ անձին պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը	Մեփականության իրավունքով Բանկի բաժնետոմս չունի:

Խորհրդի անդամ՝ Դեյվիդ Չարլզ Բադդ

Բնակության վայրը	131 Մոնթեգյու Մենշընս, Լոնդոն, W1U 6LG
Մասնագիտությունը	Բանկիրների ինստիտուտ, Լոնդոն, Մեծ Բրիտանիա, Բանկային դիպլոմ, Ինստիտուտի անդամ
Վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները	2008թ. - մինչ օրս՝ Էյչ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան ՓԲԸ, ՀՀ, խորհրդի անդամ 2007թ. - մինչ օրս՝ Էյչ-Էս-Բի Սի Բանկ ՓԻ-ԷԼ-ՍԻ Լոնդոն, Մեծ Բրիտանիա, տնօրեն միջազգային բաժնում 2005թ. - 2007թ.՝ Էյչ-Էս-Բի Սի Բանկ Լոնդոն, Մեծ Բրիտանիա, գլխավոր գործառնական տնօրեն և գործադիր տնօրեն (Միացյալ թագավորությունում մանրածախ և առևտրային բանկային ծառայությունների գործառնական ապահովում)
Տվյալ անձին պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը	Մեփականության իրավունքով Բանկի բաժնետոմս չունի:

Խորհրդի անդամ՝ Էնթրենի Քոլին Թըրներ

Բնակության վայրը	Բրայրսվուդ, Հըրսթ Ուինչֆիլդ Հոլք, Հեմփշիր, Ռ-Գ-278Գ-Գ, Սիացյալ Թագավորություն
Մասնագիտությունը	1982թ. - ին ավարտել է Սիացյալ Թագավորության Էքսեթերի համալսարանը (հունանիտար գիտությունների բակալավր) և 1997թ.-ին ֆինանսական ծառայությունների համալսարանը (գիտությունների բակալավր):
Վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները	2008թ. - մինչ օրս՝ Էյչ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ի խորհրդի անդամ: 2006թ. - մինչ օրս՝ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Ռուսաստան ՓԲԸ-ի խորհրդի անդամ: 2007թ. - ից մինչ օրս՝ Էյչ-Էս-Բի Սի Բանկ Վրաստան ՓԲԸ, գլխավոր գործադիր տնօրեն 2005թ. - 2007թ.՝ Էյչ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան ՓԲԸ, գլխավոր գործադիր տնօրեն
Տվյալ անձին պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը	Սեփականության իրավունքով Բանկի բաժնետոմս չունի:

Խորհրդի անդամ՝ Սայմըն Անդրեաս Մանթեր

Բնակության վայրը	Ուիչսթրոմ, Պարկսվինգեն 40, 1357 Բեքեսթրա, Նորվեգիա
Մասնագիտությունը	Ավարտել է Նորվեգիայի Բերգեն քաղաքի Տնտեսագիտության և գործարար կառավարման նորվեգիական դպրոցը (1995թ.):
Վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները	2008թ. - մինչ օրս՝ Էյչ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ի խորհրդի անդամ: 2008թ. - մինչ օրս՝ Էյչ-Էս-Բի Սի Բանկ Ղազախստան, գլխավոր գործադիր տնօրեն 2006թ. - 2008թ.՝ Հոնկոնգ և Շանհայ բանկային կորպորացիա լիմիթեդ, գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ 2004թ. - 2006թ.՝ Հոնկոնգ և Շանհայ բանկային կորպորացիա լիմիթեդ, գլխավոր գործառնական տնօրեն
Տվյալ անձին պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը	Սեփականության իրավունքով Բանկի բաժնետոմս չունի:

Խորհրդի անդամ՝ Ջոն Ալիսթեր Նիքոլս

Բնակության վայրը	57 Բնգս Լեյն, Ուոլթեն, Գրինսթրի, DN37 0EY, Անգլիա
Մասնագիտությունը	Ավարտել է Սիացյալ Թագավորության Լիդսի համալսարանը (1995թ.):
Վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները	2008թ. - մինչ օրս՝ Էյչ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ի խորհրդի անդամ: 2008թ. - մինչ օրս՝ Էյչ-Էս-Բի Սի Բանկ Վրաստան ՓԲԸ-ի խորհրդի անդամ: 2008թ - ից մինչ օրս՝ Էյչ-Էս-Բի Սի Բանկ Ռուսաստան ՓԲԸ, գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ 2007թ. - 2008թ.՝ Էյչ-Էս-Բի Սի Բանկ Ռուսաստան ՓԲԸ, գլխավոր գործառնական տնօրեն

	2006թ. - 2007թ.՝ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Բրազիլիա, Ավագ ղեկավար, բանկային գործառնություններ և միջազգային բանկային գործառնություններ, Հարավային Ամերիկա 2004թ. - 2006թ.՝ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Բրազիլիա, Առևտրի և Միջազգային բաժինների ղեկավար
Տվյալ անձին պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը	Սեփականության իրավունքով Բանկի բաժնետոմս չունի:

Խորհրդի անդամ՝ Արա Ալեքսանյան

Բնակության վայրը	ք.Երևան, Սարմենի 62, բն.15
Մասնագիտությունը	Երևանի Պետական Համալսարան, Կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետ, ֆիզմաթ. գիտությունների դոկտոր
Վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները	1995թ. - մինչ օրս՝ «Էյչ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, խորհրդի անդամ: 2003թ. - 2007թ.՝ Հայնեբարտբանկ ՓԲԸ, ք. Երևան, գլխավոր տնօրեն
Տվյալ անձին պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը	Սեփականության իրավունքով Բանկի բաժնետոմս չունի:

Խորհրդի անդամ՝ Դերեկ Փոլ Լանթ

Բնակության վայր	30 Վուդսայդ պողոտա, Բեկոնսֆիլդ, Բակա, HP 9, 1 JJ
Մասնագիտությունը	Օքսֆորդի Համալսարան, Օքսֆորդ, Մեծ Բրիտանիա, Հումանիտար գիտությունների բակալավր գերազանցության դիպլոմ
Վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները	2007թ. - մինչ օրս՝ «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ, Երևան, ՀՀ, խորհրդի անդամ 2003թ. - մինչ օրս՝ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ փի էլ սի, Եվրոպական կառույցի տարածաշրջանային ղեկավար
Տվյալ անձին պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը	Սեփականության իրավունքով Բանկի բաժնետոմս չունի:

Խորհրդի անդամների լիազորությունները կարող են վաղաժամկետ դադարեցվել՝ օրենքով նախատեսված դեպքերում: Խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման դեպքում հրավիրվում է բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով՝ օրենքի և սույն կանոնադրության համաձայն: Բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը հաստատում է խորհրդի անդամի լիազորությունների դադարեցումը և ընտրում խորհրդի նոր անդամ՝ ընդհանուր ժողովին մասնակցող բաժնետերերի ձայների երեք քառորդով:

Գլխավոր գործադիր տնօրեն՝ Թիմոթի Ռ. Սլեյթեր

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, Նորքի այգիներ 275
Մասնագիտությունը	Քենթրիջի համալսարան Մեծ Բրիտանիա, Մագիստրոսի կոչում
Վերջին երեք տարիների ընթացքում	2008թ. - մինչ օրս՝ Էյչ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան ՓԲԸ,

զբաղեցրած պաշտոնները	Երևան, ՀՀ, գլխավոր գործադիր տնօրեն 2006թ. - 2007թ.՝ Էյչ-Էս-Բի Սի Բանկ, Լոնդոն, Մեծ Բրիտանիա, վարկային ծառայությունների կառավարիչ 2004թ. - 2006թ.՝ Էյչ-Էս-Բի Սի Բանկ, Լոնդոն, Մեծ Բրիտանիա, ֆինանսական խորհրդատվական ծառայությունների կառավարիչ
Տվյալ անձին պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը	Սեփականության իրավունքով Բանկի բաժնետոմս չունի:

Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ, ֆինանսական շուկաներում գործառնությունների կառավարիչ՝ Իրինա Սեյլանյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, Գյուլբենկյան 34Ա, բն. 26
Մասնագիտությունը	Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան Ավտոմատացված համակարգերի կառավարման ինժեներ Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիա, ACCA Member-ի կոչում
Վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները	2007թ. - մինչ օրս՝ Էյչ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան ՓԲԸ, գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ/ֆինանսական շուկաներում գործառնությունների կառավարիչ 2006թ. - մինչ օրս՝ Էյչ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան ՓԲԸ, ֆինանսական շուկաներում գործառնությունների կառավարիչ 2002թ. - 2006թ՝ Էյչ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան ՓԲԸ, ներքին աուդիտի ղեկավար
Տվյալ անձին պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը	Սեփականության իրավունքով Բանկի բաժնետոմս չունի:

Գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ՝ Ռուզաննա Շահինյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, ք.Երևան, Նորքի Այգիներ 202
Մասնագիտությունը	Հայաստանի Ամերիկյան Համալսարան, գործարար ղեկավարման մագիստրոս, Երևանի պետական ժողովրդական տնտեսության ինստիտուտ, բակալավրի կոչում
Վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները	2006թ. - մինչ օրս՝ Էյչ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան ՓԲԸ, գլխավոր գործադիր տնօրենի տեղակալ (ներկայումս գտնվում է անվճար արձակուրդում) 1999թ.-2007թ.՝ Էյչ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան ՓԲԸ, գլխավոր հաշվապահ/ֆինանսական վերահսկիչ 2003թ.-2006թ.՝ Էյչ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան ՓԲԸ-ի խորհրդի անդամ
Տվյալ անձին պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը	Սեփականության իրավունքով Բանկի բաժնետոմս չունի:

գ. Բանկի և նրա կառավարմանը մասնակցող անձանց միջև Ազգագրի ներկայացման պահի դրությամբ շահերի բախում չկա:

ԳԼՈՒԽ 5. ԲԱՆԿԻ ՀԵՏ ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ԱՆՁԱՆՑ, ԲԱՆԿԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Բանկի հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ տեղեկություններ.

ա. Բանկի հետ փոխկապակցված, Բանկի կառավարման մարմինների անդամ, ֆիզիկական անձանց մասին տեղեկությունները ներկայացված են Ազդագրի 4-րդ գլխում:
 Բանկի հետ փոխկապակցված, Բանկի կառավարման մարմինների անդամ չհանդիսացող ֆիզիկական անձանց մասին տեղեկությունները ներկայացված են ստորև.

Ֆինանսական տնօրեն՝ Գևորգ Թառումյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, Բակունցի 2-րդ նրբանցք, 1շ., բն.43
Մասնագիտությունը	Երևանի պետական տնտեսագիտական ինստիտուտ, Լոնդոնի տնտեսագիտության բարձրագույն դպրոցի ամառային դասընթացներ
Վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները	2008թ. - մինչ օրս՝ Էյջ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան ՓԲԸ, ֆինանսական տնօրեն 2007թ. - 2008թ.՝ «ՎՏԲ Հայաստան Բանկ» փբը, գլխավոր տնօրեն, տնօրինության նախագահի տեղակալ, ֆինանսական դեպարտամենտի տնօրեն 2006թ. - 2007թ.՝ «Հայներարտբանկ» փբը, գլխավոր տնօրենի տեղակալ 1999թ. - 2006թ.՝ «Հայներարտբանկ» ՓԲԸ, ֆինանսական տնօրեն
Տվյալ անձին պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը	Սեփականության իրավունքով Բանկի բաժնետոմս չունի:

Գլխավոր հաշվապահ՝ Աստղիկ Դրամբյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, Աղայան 7շ., բն.49
Մասնագիտությունը	Երևանի պետական համալսարան, տնտեսագիտության ֆակուլտետ Երդվյալ որակավորված հաշվապահների ասոցիացիա, ACCA Member-ի կոչում
Վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները	2008թ. - մինչ օրս՝ Էյջ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան ՓԲԸ, գլխավոր հաշվապահ 2003թ. - 2008թ.՝ Էյջ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան ՓԲԸ, ֆինանսական վերահսկողության հաշվետվությունների և վերլուծության կառավարիչ
Տվյալ անձին պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը	Սեփականության իրավունքով Բանկի բաժնետոմս չունի:

Ներքին աուդիտի ղեկավար՝ Սկրտիչ Լոռեցյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, Շերամի 35շ., բն. 16
Մասնագիտությունը	Բաումանի անվան տեխնիկական համալսարան Լազերային օպտիկայի ինժեներ

Վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները	2006թ. - մինչ օրս՝ Էյջ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան ՓԲԸ, ներքին աուդիտի ղեկավար 2003թ. - 2006թ.՝ Էյջ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան ՓԲԸ, Ֆինանսական վերահսկողության բաժնի վերահսկիչ
Տվյալ անձին պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը	Սեփականության իրավունքով Բանկի բաժնետոմս չունի:

Ներքին աուդիտի անդամ ՝ Մարիամ Կարամանուկյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, Սայաթ Նովա փ. 7 շ. բն. 3
Մասնագիտությունը	Երևանի պետական համալսարան, տնտեսագիտության ֆակուլտետ Լոնդոնի տնտեսագիտության բարձրագույն դպրոց, քաղաքատնտեսության մագիստրոսի կոչում
Վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները	2007թ. - ի նոյեմբերից մինչ օրս՝ Էյջ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան ՓԲԸ, ներքին աուդիտի անդամ 2007թ. - ի մայիս-նոյեմբեր՝ Էյջ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան ՓԲԸ, ֆինանսական վերահսկողության հաշվետվությունների և վերլուծության կառավարչի պաշտոնակատար 2006թ. - ից՝ Էյջ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան ՓԲԸ, ներքին աուդիտի անդամ
Տվյալ անձին պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը	Սեփականության իրավունքով Բանկի բաժնետոմս չունի:

Ներքին աուդիտի անդամ ՝ Վահագն Նիկողոսյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, Նազարբեկյան փ. 2 շ. բն. 31
Մասնագիտությունը	Երևանի պետական համալսարան, տնտեսագիտության ֆակուլտետ Տնտեսագիտական գիտությունների թեկնածու
Վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները	2007թ. - մինչ օրս՝ Էյջ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան ՓԲԸ, ներքին աուդիտի անդամ
Տվյալ անձին պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը	Սեփականության իրավունքով Բանկի բաժնետոմս չունի:

Ներքին աուդիտի անդամ ՝ Լևոն Սահակյան

Բնակության վայրը	ՀՀ, ք.Երևան, Կոմիտաս 41/1 շ. բն. 22
Մասնագիտությունը	Երևանի պետական համալսարան, մաթեմատիկայի ֆակուլտետ Երևանի պետական համալսարան, տնտեսագիտության ֆակուլտետ
Վերջին երեք տարիների ընթացքում զբաղեցրած պաշտոնները	2007թ. - մինչ օրս՝ Էյջ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան ՓԲԸ, ներքին աուդիտի անդամ 2004թ. - 2007թ.՝ Էյջ-Էս-Բի Սի Բանկ Հայաստան ՓԲԸ, ֆինանսական վերահսկողության վարչության մասնագետ
Տվյալ անձին պատկանող Բանկի բաժնետոմսերի քանակը	Սեփականության իրավունքով Բանկի բաժնետոմս չունի:

Բանկի հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց միջև ազգակցական կապեր չկան:

բ. Բանկի հետ փոխկապակցված իրավաբանական անձ են հանդիսանում՝

Կազմակերպության անվանումը	Հասցե	Մասնակցության չափը	Գործունեության տեսակը
Էյչ-Էս-Բի-Սի Յուրփ Բ.Վ.	Կարսպելդրեֆ 6Կ, 1101 ՍՋ Ամստերդամ, Նիդերլանդներ (Karspeldreef 6K, 1101 CJ Amsterdam, Netherlands)	70 %	Հոլդինգային Ընկերություն
Ուինգս Իսթերլիշմենթ	Լենդստրասսե 99, ՖԼ9494Սքաան, Լիխտենշտեյն (Landstrasse 99, FL9494Schaan, Liechtenstein)	30 %	Սեփական միջոցների կառավարում և ներդրումներ
Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Փի Էլ Սի, Լոնդոն	Կանադայի հրապարակ 8 Լոնդոն Ե14 5ՀԲ (8 Canada Square London E14 5HQ)	0 %	Բանկ
Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Ֆրանսիա	Ելիսեյան Դաշտեր պողոտա 103, 75419 Փարիզ, սեդեքս 08 (103 avenue des Champs-Elysees 75419 PARIS cedex 08)	0 %	Բանկ
Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Տրինիդադ և Բոբինադա ԱՋ, Գերմանիա	Կոնիգսալլ 21-23, 40212 Գյուսելդորֆ, Գերմանիա (Konigsallee 21-23 40212 Dusseldorf)	0 %	Բանկ
Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Ռուսաստան	Ռուսաստանի Դաշնություն, Մոսկվա, Պավելեցկայա հրապարակ, 2-րդ շենք (2 Paveletskaya square, bld. 2, 115054, Moscow, Russian Federation)	0 %	Բանկ
Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Վրաստան	Վրաստան, Թբիլիսի, 0108, Ռուսթավելի պողոտա 15 (15 Rustaveli Ave Tbilisi 0108 Georgia)	0 %	Բանկ

2. Բանկի նշանակալից, բայց ոչ խոշոր սեփականատերերի վերաբերյալ.

ա. Բանկը նշանակալից ֆիզիկական անձ բաժնետոմսերի սեփականատերեր չունի:

բ. Բանկը նշանակալից, բայց ոչ խոշոր իրավաբանական անձ բաժնետոմսերի սեփականատերեր չունի:

**ԳԼՈՒԽ 6. ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԹՈՂԱՐԿՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. Բանկի կողմից նախկինում թողարկված և տեղաբաշխված արժեթղթերը սովորական և ոչ փաստաթղթային բաժնետոմսեր են:
2. Բաժնետոմսերը կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված չեն:
3. Թողարկված և տեղաբաշխված բաժնետոմսերի ընդհանուր ծավալը կազմում է 2,437,600 հազար ՀՀ դրամ, յուրաքանչյուրը 4,000 ՀՀ դրամ անվանական արժեքով:
4. Բաժնետոմսերի համար մարման ժամկետներ նախատեսված չեն:
5. Բաժնետոմսերի սեփականատերերի հիմնական իրավունքները եւ պարտականությունները մանրամասն ներկայացված են Ազդագրին կից ներկայացվող Բանկի կանոնադրությունում:
6. Բաժնետոմսերի փոխարկման, բաժանման, համախմբման, ձեռքբերման, հետզնման դեպքեր չեն եղել: